


ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԵՎՐՈՍՈՒՇԵՆՏ Վ 2012-2015  
Ազգային զեկույց

Հեղինակներ՝ Լուսինե Ֆլյան, Մարինա Գալստյան



CENTER FOR  
EDUCATIONAL  
RESEARCH AND  
CONSULTING

**ՈՒՍԱՆՈՂԵՐԻ ՍՈՅԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԿԵՆՍԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
ԵՎՐՈՍՈՒԲԵՆՏ Վ 2012-2015  
Ազգային զեկույց**



Երևան -2016

## **Բովանդակություն**

Աղյուսակների ցանկ.....	4
Գծապատկերների ցանկ .....	5
Հապալումների ցանկ.....	9
Եվրոստուդենտ թիմի անունից.....	10
Համագործակցություն կազմակերպությունների հետ.....	12
Ներածություն .....	14
<b>Գլուխ 1. Սոցիալ-տնտեսական բնութագրիչներ .....</b>	<b>17</b>
1.1.   Հարցվածների հիմնական բնութագրիչները.....	17
1.2.   Կրթական բնութագրիչներ .....	20
1.3.   Ժողովրդագրական պատկեր.....	23
Տարիք .....	23
Սեռ.....	26
Խնամքի տակ գտնվողներն ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների .....	28
Հասուն կարիք ունեցող ուսանողներ .....	29
Ուսանողների շարժունակությունը/ միզգանտ ուսանողներ .....	31
<b>Գլուխ 2. Քարձրագոյն ուսումնական հաստատություն ընդունելությունը .....</b>	<b>33</b>
2.1.   Որակավորումը ԲՈՒՀ ընդունվելիս ըստ հիմնական բնութագրիչների .....	34
2.2.   Ուսանողների աշխատանքային փորձառությունը .....	36
2.3.   Միջնակարգ կրթություն ստացածների ուսման ընդիատումները ԲՈՒՀ-ում ըստ հիմնական բնութագրիչների .....	37
2.4.   Նախքան ԲՈՒՀ-ն ընդունվելը որակավորում ստանալու և ԲՈՒՀ ընդունվելու միջև ընկած ժամանակահատվածը .....	39
2.5.   Մասնագիտական ուղղվածությունն ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների .....	40
<b>Գլուխ 3: Ուսանողների սոցիալական պատկանելիությունը .....</b>	<b>42</b>
3.1.   Ուսանողների ծնողների զբաղվածությունը .....	42
3.2.   Ուսանողների ծնողների ամենաբարձր կրթական աստիճանը .....	44
3.3.   Ուսանողների ծնողների զբաղվածությունն ըստ ամենաբարձր կրթական աստիճանի.....	45
3.4.   Ուսանողների ծնողների ամենաբարձր կրթական աստիճանն ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների .....	45
3.5.   Ուսանողների ծնողների սոցիալական կարգավիճակը .....	46
<b>Գլուխ 4: Ուսանողների կացություն .....</b>	<b>48</b>

4.1.	Բնակարանային պայմաններ .....	48
4.2.	Բնակման ձևութեան և կրթության .....	49
4.3.	Բնակման ձևութեան սոցիալական կարգավիճակի .....	50
4.4.	Կացության պայմաններն ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների .....	51
4.5.	Ծնողների հետ շապրոդ ուսանողների կացության հետ կապված ծախսերը .....	52
4.6.	Բնակման ձևութեան սոցիալական պայմանների բնութագրիչների .....	53
<b>Գլուխ 5:</b>	<b>Ուսանողների ծախսերը.....</b>	<b>54</b>
5.1.	Ուսանողների ծախսերն ըստ բնակման ձևի .....	54
5.2.	Ծնողների հետ շապրոդ ուսանողների ամսական ծախսերն ըստ վճարման աղյուտի .....	55
5.3.	Հիմնական ծախսերն ըստ ծնողների հետ շապրոդ ուսանողների հիմնական բնութագրիչների .....	56
5.4.	Ուսանողների ֆինանսական իրավիճակի գնահատականն ըստ բնակման ձևի .....	58
5.5.	Ծնողների հետ ապրոդ ուսանողների ֆինանսական իրավիճակի գնահատականը և միջին ամսական եկամուտը .....	59
5.6.	Ծնողների հետ շապրոդ ուսանողների ֆինանսական իրավիճակի գնահատականը և միջին ամսական եկամուտը .....	59
<b>Գլուխ 6:</b>	<b>Ուսանողների ֆինանսավորումը և աջակցությունը.....</b>	<b>60</b>
6.1.	Ուսանողի ամսական եկամուտի կառուցվածքն ըստ բնակման ձևի և ուսանողների հիմնական բնութագրիչների .....	61
6.2.	Ուսանողների եկամուտների բաշխումը և կառուցվածքը .....	62
<b>Գլուխ 7:</b>	<b>Ուսանողների ժամանակային բյուջեն և զրաղվածությունը.....</b>	<b>67</b>
7.1.	Ուսանողների զրաղվածությունը երկարաժամկետ կանոնավոր աշխատանքի դեպքում ըստ իրենց հիմնական բնութագրիչների .....	67
7.2.	Ծնողների հետ ապրոդ երիտասարդների ժամանակային բյուջեն տիպական ուսումնական շարաթվա ընթացքում (ժամ/շաբաթ) .....	68
7.3.	Ժամանակային բյուջեն ըստ մասնագիտական ուղղվածության .....	69
<b>Գլուխ 8:</b>	<b>Դասընթացի գնահատում .....</b>	<b>71</b>
8.1.	Դասընթացների հիմնական առանձնահատկությունների գնահատում .....	71
<b>Գլուխ 9:</b>	<b>Միջազգային շարժունություն .....</b>	<b>73</b>
<b>Ամփոփում.....</b>		<b>77</b>
<b>Առաջարկություններ.....</b>		<b>81</b>

## Աղյուսակների ցանկ

Աղյուսակ 1: Հարցվածների հիմնական բնութագրիչները .....	18
Աղյուսակ 2: Հարցված ուսանողների թիվն ըստ ԲՈՒՀ-երի .....	20
Աղյուսակ 3: Ըստացիկ կիսամյակում ներզրավա՞ծ եք կրթական ծրագրում .....	20
Աղյուսակ 4: Զեր կրթական ծրագիրը պաշտոնապես ամրագրվա՞ծ է որպես հեռավար ուսուցման ծրագիր .....	20
Աղյուսակ 5: Ուսանողների բաշխումն ըստ մասնագիտական ուղղվածության .....	20
Աղյուսակ 6: Ուսանողների մասնագիտական ուղղվածությունն ըստ առկա որակավորման (%) .....	21
Աղյուսակ 7: Մտադի՞ր եք շարունակել Զեր ուսումը ներկայիս կրթական ծրագրի/ծրագրերի ավարտից հետո .....	22
Աղյուսակ 8: Ո՞ր մակարդակում եք պլանավորում շարունակել ուսումը .....	22
Աղյուսակ 9: Ուսանողների միջին տարիքն ըստ հիմնական բնութագրիչների .....	25
Աղյուսակ 10: Ամենափոքր երեխաների տարիքային բաշխումը .....	29
Աղյուսակ 11: Արդյոք ունե՞ք հատուկ կարիք, առողջական երկարատև խնդիրներ կամ ֆունկցիոնալ սահմանափակումներ .....	30
Աղյուսակ 12: Հիմնական աշխատանք ունեցող ուսանողների բաշխումն ըստ տարբեր խմբերի .....	36
Աղյուսակ 13: Ուսանողների ծնողների գրադադարությունն ամբողջ բնակության հետ համեմատած .....	42
Աղյուսակ 14: Ուսանողների ծնողների կրթամակարդակն ըստ ԿՄՄԴ դասակարգման, ընդհանուր բնակչության թվի հետ համեմատած .....	44
Աղյուսակ 15: Ծնողների սոցիալական դիրքն ըստ կրթական մակարդակի .....	47
Աղյուսակ 16: Ուսանողական հանրակացարանում ապրողներն ըստ տարիքի .....	47
Աղյուսակ 17: Տանից դեպի ԲՈՒՀ ծախսված ժամանակը .....	53
Աղյուսակ 18: Ուսանողների ամսական ծախսերն ըստ բնակման ձևի .....	54

Աղյուսակ 19: Ծնողների հետ շապրոդ ուսանողների ամսական ծախսերն ըստ ուսանողի (ՀՀ դրամ).....	55-56
Աղյուսակ 20: Ծնողների հետ շապրոդ ուսանողների ամսական հիմնական ծախսերն ըստ հիմնական բնութագրիչների (ՀՀ դրամ) .....	57
Աղյուսակ 21: Ծնողների հետ ապրոդ ուսանողների ներկայիս ֆինանսական դժվարություններն ըստ միջին եկամտի (ՀՀ դրամ) .....	59
Աղյուսակ 22: Ծնողների հետ ապրոդ ուսանողների եկամուտների բաշխումն ըստ եկամտային խմբերի.....	63
Աղյուսակ 23: Ծնողների հետ շապրոդ ուսանողների եկամուտների բաշխումն ըստ եկամտային խմբերի.....	65
Աղյուսակ 24: Ի՞նչ կրթական ծրագրով էիք սովորում, եթե մեկնեցիք արտերկիր(%) .....	74

## Գծապատկերների ցանկ

Գծապատկեր 1: Ուսման ինտենսիվությունն ըստ մասնագիտական ուղղվածության.....	22
Գծապատկեր 2: Հարցվողների տարիքային բաշխումը .....	23
Գծապատկեր 3 Տարիքային բաշխումն ըստ մասնագիտական ուղղվածության.....	24
Գծապատկեր 4: Խմբավորված տարիքներստ ուսանողների բնութագրիչների .....	25
Գծապատկեր 5: Ուսանողների բաշխումն ըստ սեռի և մասնագիտական ուղղվածության .....	26
Գծապատկեր 6: Ուսանողների բաշխումն ըստ սեռի և հիմնական բնութագրիչների .....	27
Գծապատկեր 7: Առնվազն մեկ երեխա ունեցողների բաշխումը.....	28
Գծապատկեր 8: Ընդհանուր առմամբ, որքանո՞վ են Ձեր սահմանափակումները խոչընդոտում Ձեր ուսումնառությանը.....	29
Գծապատկեր 9: Ընդհանուր առմամբ, որքանո՞վ են հանրությունը և/կամ ինստիտուտներն օժանդակում Ձեզ հաղթահարելու ուսմանն առընչվող սահմանափակումներում (% ըստ առողջական խնդրի տեսակի).....	30
Գծապատկեր 10: Ուսանողների բաշխումն ըստ սեփական և ծնողների ծննդավայրի և հիմնական բնութագրիչների .....	32

Գծապատկեր 11: Առաջին անգամ դպրոցն ավարտելիս ի՞նչ որակավորում եք ստացել (օր.՝ թերի միջնակարգ կամ ընդհանուր միջնակարգ կրթական մակարդակ).....	33
Գծապատկեր 12: Որտե՞ղ եք ստացել Ձեր առաջին որակավորումն ըստ մարզերի.....	34
Գծապատկեր 13: Ուսանողների որակավորումը նախքան ԲՈՒՀ-ն ընդունվելն ըստ հիմնական բնութագրիչների .....	35
Գծապատկեր 14: Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելուց հետո երբեք ընդհատե՞լ եք Ձեր կրթությունն առնվազն մեկ տարով.....	37
Գծապատկեր 15: Ուսման ընդհատումը ԲՈՒՀ-ում ըստ հիմնական բնութագրիչների.....	38
Գծապատկեր 16: Նախքան ԲՈՒՀ ընդունվելը որակավորում ստանալու և ԲՈՒՀ ընդունվելու միջն ընկած ժամանակահատվածը.....	39
Գծապատկեր 17: Մասնագիտական ուղղվածությունն ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների .....	40
Գծապատկեր 18: Ուսանողների ծնողների գրաղվածությունն ըստ ամենաբարձր կրթական աստիճանի.....	45
Գծապատկեր 19: Ուսանողների ծնողների ամենաբարձր կրթամակարդակն ըստ հիմնական բնութագրիչների.....	46
Գծապատկեր 20: Ուսանողների ծնողների սոցիալական կարգավիճակն ըստ ուսանողների գնահատականի.....	47
Գծապատկեր 21: Ուսանողների բնակման ձևը .....	48
Գծապատկեր 22: Ուսանողների բնակման ձևն ըստ տարիքի .....	49
Գծապատկեր 23: Ուսանողների բնակման ձևն ըստ սեռի և որակավորման աստիճանի .....	49
Գծապատկեր 24: Ուսանողների բնակման ձևն ըստ ծնողների կրթական աստիճանի.....	50
Գծապատկեր 25: Ուսանողների բավարարվածությունը կացարանով ըստ բնակման ձևի.....	51
Գծապատկեր 26: Կացության հետ կապված ամսական միջին ծախսերը .....	52
Գծապատկեր 27: Տանից դեպի ԲՈՒՀ ծախսած ժամանակն ըստ բնակման ձևի (միջին ժամանակահատվածը, միջին քառակուսային շեղում .....	53

Գծապատկեր 28: Ծնողների հետ շապրոդ ուսանողների ամսական ծախսերն ըստ վճարման աղյուրի (%).....	55
Գծապատկեր 29: Ծնողների հետ շապրոդ ուսանողների հիմնական ծախսերն ըստ հիմնական բնութագրիչների (%) .....	57
Գծապատկեր 30: Ներկայումս ունե՞ք ֆինանսական դժվարություններ ըստ բնակման ձևի....	58
Գծապատկեր 31: Ծնողների հետ շապրոդ ուսանողների ֆինանսական դրությունն ըստ նրանց հիմնական բնութագրիչների .....	60
Գծապատկեր 32: Ծնողների հետ ապրոդ երիտասարդների ամսական եկամուտն ըստ աղյուրի և հիմնական բնութագրիչների .....	61
Գծապատկեր 33: Ծնողների հետ շապրոդ երիտասարդների ամսական եկամուտն ըստ աղյուրի և հիմնական բնութագրիչների .....	62
Գծապատկեր 34: Ծնողների հետ ապրոդ երիտասարդների ամսական ամրող եկամուտի բաշխումն ըստ եկամտային դեցիլների (ՀՀ դրամ).....	62
Գծապատկեր 35: Ծնողների հետ ապրոդ ուսանողների ամսական եկամուտների խտացումը (Lorenz Curve) .....	64
Գծապատկեր 36: Ծնողների հետ շապրոդ ուսանողների եկամուտների բաշխումն ըստ եկամտային խմբերի.....	64
Գծապատկեր 37: Ծնողների հետ շապրոդ ուսանողների ամսական եկամուտների կոնցենտրացիան (Lorenz Curve).....	66
Գծապատկեր 38: Ծնողների հետ ապրոդ ուսանողների երկարաժամկետ աշխատանքային ակտիվությունը (%).....	67
Գծապատկեր 39: Ծնողների հետ ապրոդ ուսանողների երկարաժամկետ աշխատանքային ակտիվությունը (%).....	68
Գծապատկեր 40: Ծնողների հետ ապրոդ ուսանողների ուսումնառության հետ կապված գործունեության ժամանակային բյուջեն .....	70
Գծապատկեր 41: Բակալավրիատում սովորոդ ուսանողների ժամանակային բյուջեն տիպային ուսումնական շաբաթվա ընթացքում ըստ մասնագիտական ուղղվածության (ժամ/շաբաթ) ..	70

Գծապատկեր 42: Ինչպե՞ս եք գնահատում Ձեր հնարավորություններն աշխատաշուկայում ներկայիս կրթական ծրագիրն ավարտելուց հետո (%) .....	71
Գծապատկեր 43: Որքանո՞վ եք բավարարված Ձեր կրթությամբ: (%) .....	72
Գծապատկեր 44: Երբեք որպես ուսանող սովորե՞լ եք արտերկրում (%) .....	73
Գծապատկեր 45: Երբեք որպես ուսանող սովորե՞լ եք արտերկրում ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների(%) .....	73
Գծապատկեր 46: Արտերկրում ստացված կրեդիտները /ԿՓԵՀ, վկայականներ/ ճանաչվե՞լ են Ձեր բուհի կողմից (%) .....	75
Գծապատկեր 47: Որքանո՞վ են հետևյալ կետերը խոչընդոտ հանդիսացել(ում) արտերկրում սովորելու համար (մեծ խոչընդոտ) (%) .....	76
Գծապատկեր 48: Որտեղ եք պատրաստվում ստանալ ժամանակավոր կրթություն արտերկրում (%) .....	77

## **Հապավումների ցանկ**

**ԱՎԾ** - Ազգային վիճակագրական ծառայություն

**ՀՀ ԿԳՆ** -Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն

**ԵՊԼՀ** - Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան

**ԿՄՍԴ** - Կրթության միջազգային ստանդարտ դասակարգում (ISCED)

**ԿՀԽԿ**- Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն

**ԿՓԵՀ** Կրեղիտների փոխանցման եվրոպական համակարգ

**ՀՌԿԿ** Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն

## Եվրոստուդենտ Վազգային թիմի անունից

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը՝ քաջ գիտակցելով և պատկերացնելով, որ Հայաստանի Հանրապետության վաղվա հաջողությունը պայմանավորված է որակյալ մասնագետներ պատրաստելու անհրաժեշտությամբ, որոնք ի գորու կլինեն զարգացնել տնտեսությունը և ապահովել երկրի կայունությունը, բարեփոխումների լայնածավալ ռազմավարություն է մշակել՝ միտում ունենալով բարձրացնել բարձրագույն կրթության համակարգի որակը, բարեկավել կրթական գործընթացների իրավաօրենսդրական դաշտը՝ իրանելով սոցիալական լայն շերտերի ներգրավվածությունը բարձրագույն կրթական ծրագրերում, որոնք միտում ունեն նվազեցնել անհավասարությունը, ֆինանսական խոչընդուները և ընդլայնել հասանելիությունը դեպի բարձրագույն կրթություն:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթական հաստատություններում ընդգրկված ուսանողների շրջանում հետազոտություններն էական նշանակորյուն ունեն այս ոլորտում քաղաքականության ճշգրիտ պլանավորման, մշակման և համակարգման համար, քանզի հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս վերհանել այն հիմնական խնդիրները, որոնք առկա են ուսանողների բարձրագույն կրթության մուտքի, ընթացքի և ավարտի հետ կապված, ինչպես նաև կառուցել հետագա քաղաքականությունը՝ հիմք ընդունելով թվային արդյունքները:

Բոլոնիայի բարեփոխումների համատեքստում ուսանողների սոցիալական չափումը, ուսման որակը, միջազգային շարժունությունը, ապրելակերպը, հանրային աջակցությունը, ֆինանսական դժվարությունները, ժամանակի պլանավորումը, աշխատանքային հնարավորություններն այն հիմնական ցուցիչներն են, որոնց հաջողություններով է պայմանավորված ՀՀ քաղաքացու կրթության շարունականությունը, նրա հետաքրքրավածությունն այն կրթական ծրագրերի, մասնագիտությունների նկատմամբ, որոնք ներկայումս առաջարկում է ՀՀ բարձրագույն կրթական ծառայությունների շուկան:

Միանալով Եվրոստոդենտ Վ միջազգային հետազոտական ծրագրին, Հայաստանն առաջինը նախկին խորհրդային երկրներից համարձակություն ունեցավ հրապարակավ բարձրածայնել այն տարարնույթ խնդիրների մասին, որոնք ներկայումս առկա են մեր երկրի բարձրագույն

կրթության համակարգում, ինչպես նաև սույն նախագծի շրջանակներում համեմատել մեր երկրի ցուցանիշները 58 տարբեր հարցերի շուրջ 29 այլ երկրների ցուցանիշների հետ՝ վերհանելով առկա իրավիճակի մասին օբյեկտիվ պատկեր՝ հիմնված Եվրոստուդենտ V Կոնսորցիոնի բոլոր պահանջների և իրավական դրույթների վրա:

Սույն հետազոտությունն ամենամեծն է ուսանողների թվաքանակի առումով (վերլուծված են 2431 ուսանողների տվյալներ) առ այսօր կատարված մեր երկրում, որի միջոցով փորձել ենք պարզաբանել Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) այլ երկրների հետ բարեփոխումների շարժնթացը և գնահատել դրանց արդյունավետությունը, ինչպես նաև բացահայտել այն հիմնական խոչընդոտները, որոնք գրանցվել են ՀՀ բարձրագույն կրթություն ստացող ուսանողների մոտ:

Մենք լիահույս ենք, որ բարձրագույն կրթության բարեփոխումների արդյուքնում ՀՀ բարձրագույն կրթության բովանդակությունն կարդիականացվի, և այն մրցունակ կդառնա համաշխարհային կրթական շուկայում: Որակյալ բարձրագույն կրթությունը հնարավություն կրնանոի պատրաստել ժամանակակից հմտություններով օժտված մարդկային ռեսուրսներ, որոնք կապահովեն երկրի կայուն առաջընթացը:

Եվրոստուդենտ V ազգային թիմը հասուն շնորհակալություն է հայտնում հարցման ընթացքում/ 2012-2015թթ./ ՀՀ կրթության և գիտության լիազոր մարմնի դեկանալ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանին ծրագրին իր անմիջական օժանդակությունը ցուցաբերելու համար: Հետազոտական թիմը շնորհակալություն է հայտնում ՀՀ բոլոր բուհերի աշխատակազմերին հետազոտական աշխատանքներին աջակցություն ցուցաբերելու համար, ինչպես նաև տարբեր բուհերի կամավորներին, որոնց օգնությամբ հնարավոր եղավ իրականացնել հարցումը ՀՀ ուսանողների շրջանում:

Հայաստանի ազգային թիմը ցանկանում է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին մաղթել հաջողություններ նրանց հետազա կրթական և մասնագիտական գործունեության ասպարեզում:

## **Հուսինե Ֆլոյան**

### **Եվրոստուդենտ V Հայաստանի ազգային թիմի դեկանալ**

## **Համագործակից կազմակերպությունների մասին**

### **ՀՀ կրթության և գիտության նախարարություն**

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ՀՀ կրթության բարձրագույն լիազոր մարմինն է, որը պատասխանատու է երկրի կրթական քաղաքականության մշակման և իրականացման համար:

2005 թվականին Հայաստանը՝ միանալով Բոլոնիայի գործընթացին, նպատակ է դրել արդիականացնել բարձրագույն և հետրուհական կրթությունը, այն դարձնել մրցունակ և գրավիչ, ինչպես նաև ներդաշնակեցնել կրթական ծրագրերի բովանդակությունը՝ հնարավորություն տալով ուսանողներին մասնակցել միջազգային շարժունության ծրագրերին: 2015 թվականի մայիսի 14-15-ին Երևանում հաջորդությամբ իրականացվեց Բոլոնիայի Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի (ԵԲԿՏ) գագաթաժողովը, որի արդյունում ընդունվեց Երևանյան Հռչակագիրը: ՀՀ կրթության և գիտության նախարարության գործունեության վերաբերյալ տեղեկատվություն կարելի է ստանալ [www.edu.am](http://www.edu.am) կայքէջում:

### **Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարան**

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարանը ՀՀ առաջատար քուիերից է, որտեղ իրականացվում է եռաստիճան կրթություն հումանիտար և հասարակական գիտությունների կրթական ծրագրերի շրջանակներում: Համալսարանը ներկայում մասնագետներ է պատրաստում ոչ միայն լեզվաբանական և մանկավարժական, այլև հասարակակագիտական ուղղություններով /քաղաքագիտություն, միջազգային հարաբերություններ, Եվրոպագիտություն, տեղեկատվություն և հանրային հաղորդակցական տեխնոլոգիաներ, միջազգային տուրիզմ, միջազգային լրագրություն և այլն/:

ԵՊԼՀ կրթական և գիտական գործընթացների վերաբերյալ կարելի է տեղեկատվություն ստանալ համալսարանի պաշտոնական՝ [www.brusov.am](http://www.brusov.am) կայքէջում:

### **Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն**

Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնը կրթության ոլորտում մասնագիտացված հետազոտական կենտրոն է: Կենտրոնն իրականացրել է մի շարք ուսումնասիրություններ՝ բարձրագույն կրթական համակարգի, ներառական կրթության, շիշանավարտների գնահատման, ինչպես նաև երեխաների իրավունքների վերաբերյալ: Կենտրոնն հավաքագրել և հրապարակային է դարձրել կրթության ոլորտում իրականացված հետազոտությունների հաշվետվություններ, որոնք հասանելի են կենտրոնի [www.e-research.am](http://www.e-research.am) կայքէջում: Հետազոտողների համար կենտրոնն իրականացնում է դասընթացներ հետազոտության տարբեր փուլերի և մեթոդաբանությունների վերաբերյալ:

### **Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն**

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների «ՀՇԿ» ծրագրի Հայաստանյան գրասենյակի նպատակն է՝ Հարավային Կովկասի այլ երկրների հետ մեկտեղ խթանել հասարակագիտական հետազոտություններն ու հանրային քաղաքականության վերլուծությունը Հարավային Կովկասում: Ծրագիրը կոչված է ապահովելու բարձրորակ հետազոտական ռեսուրսների մատչելիությունը, զարգացնելու հետազոտական կարողությունները և ընդլայնելու հասարակական գիտությունների հետազոտողների և քաղաքական գործիչների միջև երկխոսությունն ու համագործակցությունը: Ծրագրի պաշտոնական հասցեն է՝ [www.crrc.am](http://www.crrc.am):

## **Ներածություն**

Ժամանակակից գլոբալ մարտահրավերների և բարձրագույն կրթության մրցակցության պայմաններում մշտապես անհրաժեշտություն է առաջանում նորացնել բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթական ծրագրերի բովանդակությունը, ստեղծել հավասար պայմաններ տարբեր սոցիալական կարգավիճակ ունեցող ուսանողների համար անխոչընդուն բարձրագույն կրթություն ստանալ և իրենց կայուն տեղը գտնել տեղական և միջազգային աշխատաշուկաներում:

«Ուսանողների սոցիալ-տնտեսական կենսապայմանները Հայաստանում. Եվրոստուդենտ V» միջազգային հետազոտությունն իրականացվել է ՀՀ Կրթության և գիտության նախարարության, Երևանի Վ. Բյուտովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի, Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոնի, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի համագործակցությամբ 2014թ. փետրվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում:

Ծրագրի իրականացումն ամրողությամբ ֆինանսավորել է ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը:

Եվրոստուդենտ V-ի հարցման նպատակն է ուսումնասիրել և բացահայտել ՀՀ ուսանողների սոցիալ-տնտեսական վիճակը, նրանց բավարարվածությունը բարձրագույն կրթության տարբեր հարցերի շուրջ, ինչպես նաև սույն հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել են ուսանողների շարժունության հետ կապված մի շարք խնդիրներ:

Եվրոստուդենտ ծրագիրը մեկնարկել է 1994 թվականին, և արդեն շուրջ 20 տարի է այս իրականացվում՝ հնարավորություն տալով Բոլոնիայի պայմանագրի անդամ երկրներին չափել իրենց ուսանողների սոցիալ-տնտեսական իրավիճակը, վերհանել այն խնդիրները, որոնք առկա են այս ոլորտում: Ստացված արդյունքներն ապագայում հնարավորություն կընձեռն բարձրագույն կրթության քաղաքականությամբ զբաղվող պատասխանատուներին առավել արդյունավետ ձևով կառուցել հետագա աշխատանքների հետագիծը: Եվրոստուդենտ

ծրագրի արդյունքները գետեղված են Եվրոստուդենտի պաշտոնական՝ <http://www.eurostudent.eu/> կայքէջում:

Եվրոստուդենտ V-ին ընդհանուր առմամբ մասնակցել է 200000 ուսանող 29 երկրից, այդ թվում առաջին անգամ հետազոտությանը մասնակցեցին նախկին Խորհրդային Միության երկրները՝ Հայաստանը, Ռուսաստանը, Ուկրաինան, Ղազախստանը և Վրաստանը: Հայաստանն առաջինն էր, որ միացավ այս միջազգային ծրագրին և նախաձեռնող հանդիսացավ մյուս չորս երկրների ներգրամանն այս գործընթացին:

Ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության բարձրագույն կրթություն իրականացնող հաստատությունների ուսանողների շրջանում իրականացվել են օպլայն հարցումներ՝ ներառելով կրթական բոլոր մակարդակները և ձևերը, ինչպես նաև օտարերկրյա ուսանողներին: Հարցմանը մասնակցել է ավելի քանի 2500 ուսանող և բարձրագույն ուսումնական հաստատություններից, ինչպես նաև այն հաստատություններից, որոնք իրականացնում են բարձրագույն կրթություն: Հետազոտության հարցման համար կիրառվել է եռալեզու (հայերեն, անգլերեն, ռուսերեն) առցանց հարթակը /ուսանողները հնարավորություն են ունեցել հարցերին պատճախանել մայրենի և երկու օտար լեզուներով/: Տվյալների մաքրման, որակի ստուգման արդյունքում վերլուծվել են 2431 ուսանողի տվյալներ:

Յուրաքանչյուր երկիր կարող էր ավելացնել նոր հարցեր հիմնական հարցաշարի մեջ, որոնք յուրահատուկ են ազգային բարձրագույն կրթության համակարգին, սակայն Հայաստանի ազգային թիմն այս անգամ զերծ մնաց հարցաշարը ծանրաբեռնելուց, քանի որ փորձարկման փուլում պարզվեց, որ յուրաքանչյուր ուսանող հիմնական հարցերի վրա ծախսելու է մոտավորապես 25 րոպե և նպատակահարմար չէ նոր հարցերով երկարացնել հարցման համար ուսանողի կորլից տրամադրվող ժամանակը:

Հետազոտության արդյունքներն անդրադառնում են ուսանողների սոցիալ-ժողովրդագրական պատկերին, ուսանողների շարժունությանը, մասնագիտական փորձառությանը, սոցիալ-տնտեսական վիճակին, նրանց կենսապայմաններին և շարժունությանը:

Հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացվել են 2014թ. մարտ-մայիս ամիսներին:

Եվրոստուդենտ միջազգային ծրագրի արդյունքներն ամփոփվել են 2015 թվական մայիս – հունիս ամսիներին, ինչպես նաև բացվել է առցանց համակարգը, որը հնարավություն է տալիս ցանկացած երկրի ցուցանիշներ համեմատել այլ երկրի կամ երկրների ցուցանիշների հետ (<http://database.eurostudent.eu/>):

Ծրագրի հիմնական արդյունքները՝ <<Եվրոպայի ուսանողական կյանքի սոցիալ-տնտեսական պայմանները>> վերնագրով /հեղ. Քրիստինա Հառլաշիլը և այլն/ տպագրվել են 2015 թվականին և տեղադրված են հետևյալ հասցեով՝ <http://database.eurostudent.eu/>: Հաշվետվությունը կարելի է անվճար ներբեռնել և մանրամասնորեն ծանոթանալ հիմնական արդյունքների հետ:

## Գլուխ1. Սոցիալ-տնտեսական բնութագրիչներ

### 1.1. Հարցվածների հիմնական բնութագրիչները

<<Եվրոստուդենտ>> հետազոտական ծրագրի շրջանակներում իրականացված հարցմանը մասնակցել է ավելի քան 2500 ուսանող ՀՀ բոլոր բուհներից, սակայն վերլուծությունն իրականացվել է 2431 ուսանողի տվյալների հիման վրա, քանի որ տվյալների մաքրման գործընթացում խոտանվել է ավելի քան 100 ուսանողի տվյալ:

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացված են մանրամասն տվյալներ հարցմանը մասնակցած ուսանողների վերաբերյալ, այդ թվում կշռված տվյալները:

Ուսանողների բաշխումը ըստ Սեռի	Տիշոված տվյալներ <sup>1</sup>	Կշռված տվյալներ
Իգական	73.3	54.9
Արական	26.7	45.1
Տարիքի		
Մինչև 21	77.9	74.3
22-24	17.5	17.1
25-29	2.5	4.4
30 և ավելի	2.1	4.3
Ծննդավայրի <sup>2</sup>		
Տեղաբնակ	94.9	94.0
Արտերկրից	5.1	6.0
ԲՈՒՀ-ի տեսակի		
Համալսարան	94.3	94.3
Այլ ուսումնական հաստատություն	5.7	5.7
Կարգավիճակի		
Առկա կամ հեռակա ուսանող	98.4	98.0
Անհատական հետազծով ուսանող	0.5	0.8
Այլ	1.1	1.2
Որակավորման աստիճանի		
Բակալավր	74.2	82.7
Մագիստրոս	20.6	11.6
Այլ	5.2	5.7

<sup>1</sup>Այսուհետ բոլոր աղյուսակներում ներկայացված են լինելու միայն կշռված տվյալները: Բացառությունների դեպքում համապատասխան հղում կլինի:

<sup>2</sup>Ըստ e-international փոփոխականի, որը հաշվարկված է ուսանողների և նրանց ծնողների ծննդավայրերի մասին փոփոխականների արժեքների հիման վրա:

ԲՈՒՀ-ի տեղակայման		
Երևան	93.5	93.4
Մարզ	6.5	6.6

#### Աղյուսակ 1: Հարցվածների հիմնական բնութագրիչները

Հարցման մասնակցել են ուսանողներ 38 քարձրագույն ուսումնական հաստատություններից և այլ ուսումնական հաստատություններից, որոնք իրականացնում են քարձրագույն կրթության ծրագրեր: Ստորև ներկայացված աղյուսակում նշված է ուսանողների բաշխումն ըստ ԲՈՒՀ-երի:

Քարձրագույն ուսումնական հաստատություններ		N	%
1	Երևանի պետական համալսարան	530	21.8
2	Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան	290	11.9
3	ԵրևանիՎ.Քրյուսովի անվան պետական լեզվահասարակագիտական համալսարան	183	7.5
4	Հայաստանի պետական ազգարային համալսարան	182	7.5
5	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան (պոլիտեխնիկ)	178	7.3
6	Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարան	147	6.0
7	Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան	145	6.0
8	Հայ-ռուսական /լյավոնական/ համալսարան	94	3.9
9	Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան	77	3.2
10	Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա	75	3.1
11	Գյումրու Մ.Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտ	69	2.8
12	Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ	62	2.6
13	ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոն	49	2.0
14	Հայաստանում ֆրանսիական համալսարան	40	1.6
15	Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա	34	1.4
16	Երևանի գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիա	30	1.2
17	Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարան	28	1.2

1 8	Գավառի պետական համալսարան	20	0.8
1 9	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ	19	0.8
2 0	ՀՀ ոստիկանության կրթահամալիր	18	0.7
2 1	Եվրասիա միջազգային համալսարան	17	0.7
2 2	ՀՀ ԱԲՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա	15	0.6
2 3	Սանկտ-Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի, տնտեսագիտության և իրավունքի ինստիտուտ	14	0.6
2 4	Գորիսի պետական համալսարան	13	0.5
2 5	ՀՀ պետական կառավարման ակադեմիա	13	0.5
2 6	Երևանի «Հյուսիսային համալսարան»	12	0.5
2 7	ԵՊՏՀ-ի Գյումրու մասնաճյուղ	12	0.5
2 8	Երևանի «Հայրուսակ» համալսարան	10	0.4
2 9	Վանաձորի Հ.Թումանյանի անվ. մանկավարժական ինստիտուտ	9	0.4
3 0	Երևանի “ՍՖԲ” ֆինանսական ակադեմիա	8	0.3
3 1	Երևանի գյուղատնտեսական համալսարան	4	0.2
3 2	Հայաստանի ամերիկյան համալսարան	4	0.2
3 3	Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ	3	0.1
3 4	Գեղարվեստի պետական ակադեմիա	3	0.1
3 5	Երևանի «Գլածոր» կառավարման համալսարան	3	0.1
3 6	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ Գյումրու մասնաճյուղ	3	0.1
3 7	Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտ Վանաձորի մասնաճյուղ	3	0.1
3	Այլ ուսումնական հաստատություններ	15	0.6

Ուսանողների սոցիալ-տնտեսական կենսապայմանները Հայաստանում–Ազգային գեկույց Հայաստան-EUROSTUDENTV

8			
	Ընդամենը	243 1	100

Աղյուսակ 2: Հարցված ուսանողների թիվն ըստ ԲՈՒՀ-երի

## 1.2. Կրթական բնութագրիչներ

Ուսանողների ներգրավվածությունը կրթական ծրագրերում ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	Ընթացիկ կիսամյակում ներգրավված եք կրթական ծրագրում	%
1	Հայաստանի բազմապրոֆիլ համասարաններից մեկում	40.5
2	Հայաստանի համալսարաններից մեկում, որն ունի ուղղվածություն	53.8
3	Հայաստանի այլ բարձրագույն կրթություն իրականացնող հաստատությունում	5.7

Աղյուսակ 3: Ընթացիկ կիսամյակում ներգրավված եք կրթական ծրագրում

Հարցման մասնակիցներից 14.6% սովորում են հեռավար ուսուցման ծրագրով.

	Ձեր կրթական ծրագիրը պաշտոնապես ամրագրված է որպես հեռավար ուսուցման ծրագիր	%
1	Այո	85.4
2	Ոչ	14.6

Աղյուսակ 4: Ձեր կրթական ծրագիրը պաշտոնապես ամրագրված է որպես հեռավար ուսուցման ծրագիր

Ըստ մասնագիտական ուղղվածության ուսանողների բաշխումը ներկայացված է ստորև.

	Բաշխումն ըստ մասնագիտական ուղղվածության	%
1	Հումանիտար գիտություններ և արվեստ	26.6
2	Սոցիալական գիտություններ, բիզնես և արվեստ	23.9
3	Ճարտարագիտություն, արտադրություն և շինարարություն	14.8
4	Առողջապահություն և բարեկեցություն	9.9
5	Կրթություն	7.6
6	Բնական գիտություններ	6.1
7	Գյուղատնտեսություն	3.1
8	Ծառայություններ	2.6
9	Ընդհանուր ծրագիր	1.4
10	Զիստակեցված	4.0

Աղյուսակ 5: Ուսանողների բաշխումն ըստ մասնագիտական ուղղվածության

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ աղյուսակից հարցման մասնակիցների կեսի մասնագիտական ուղղվածությունը հումանիտար գիտությունները և արվեստն են կամ սոցիալական գիտությունները, բիզնեսը և իրավագիտությունը: Այնուհետև հաջորդում են ճարտարագիտական մասնագիտություններով ուսանողները (14.8%) և բժշկական մասնագիտությունները (9.9%):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են ուսանողների մասնագիտական ուղղվածությունն ըստ առկա (ընթացիկ) որակավորման աստիճանի:

		<b>Բակալավր</b>	<b>Մագիստրոս</b>	<b>Այլ</b>
1	Հումանիտար գիտություններ և արվեստ	81.3	<b>14.8</b>	3.9
2	Սոցիալական գիտություններ, բիզնես և արվեստ	85.0	9.8	5.2
3	Ճարտարագիտություն, արտադրություն և շինարարություն	88.1	8.1	3.7
4	Առողջապահություն և բարեկեցություն	78.8	<b>13.2</b>	8.0
5	Կրթություն	78.4	<b>13.3</b>	8.2
6	Բնական գիտություններ	81.8	<b>14.1</b>	4.1
7	Գյուղատնտեսություն	84.0	6.5	9.5
8	Ծառայություններ	85.6	8.0	6.5

**Աղյուսակ 6:** Ուսանողների մասնագիտական ուղղվածությունն ըստ առկա որակավորման (%)

Չնայած որ վերը նշված մասնագիտական որոշ ուղղությունների (ծառայություններ, գյուղատնտեսություն) ընտրանքի ծավալը բավականին փոքր է եզրակացություններ անելու համար, ընդհանուր առմամբ աղյուսակից կարող ենք պատկերացում կազմել, թե ինչպիսին է ընդհանուր միտումը: Մասնավորապես, թե մասնագիտական որ ուղղություններով են ուսանողները նախընտրել շարունակել ուսումը մագիստրատուրայում: Տվյալ դեպքում ինչպես տեսնում ենք աղյուսակից՝ հումանիտար գիտությունների և արվեստի, կրթության, գիտության և առողջապահության ոլորտների նախընտրությունն ավելի մեծ է (13-14%): Մինչդեռ զարմանալի չէ, որ գյուղատնտեսական և ճարտարագիտական ճյուղերում մագիստրատուրայում ուսումը շարունակողներն ավելի քիչ են: Հստ երևույթին, դա պայմանավորված է երկրում նրանց աշխատանքային հեռանկարների ավելի սահմանափակ լինելու հանգամանքով:

Ուսանողների 63.9%-ը պլանավորում են շարունակել ուսումը ներկայիս կրթական ծրագրի ավարտից հետո, 33% դեռևս չեն կողմնորոշվել, թե ինչպես կվարվեն, և միայն 3.3%-ն է հստակ որոշել, որ ուսումը շարունակելու մտադրություն չունի:

Մտադիր եք շարունակել ուսումը		%
1	Այո, ավարտելուց հետո մեկ տարվա ընթացքում	54.5
2	Այո, սակայն ավարտելուց հետո մեկ տարուց ոչ շուտ	9.4
3	Ոչ, ես մտադիր չեմ շարունակել ուսումս առհասարակ	3.1
4	Դեռ չգիտեմ	33.0


Աղյուսակ 7: Մտադիր եք շարունակել Ձեր ուսումը ներկայիս կրթական ծրագրի/ծրագրերի ավարտից հետո:

Ուսումը շարունակելու մտադրություն ունեցող ուսանողների գերակշռող մեծամասնությունը պատրաստվում է շարունակել այն մազգաստրատուրայում (76.8%)。

Որ մակարդակում եք պլանավորում շարունակել ուսումը		%
1	Բակալավրիատ	2.5
2	Մագիստրատուրա	<b>76.8</b>
3	Ասպիրանտուրա /առկա, հեռակա ասպիրանտ/	12.4
4	Այլ ծրագիր	3.4
5	Դեռ չգիտեմ	4.9

Աղյուսակ 8: Ո՞ր մակարդակում եք պլանավորում շարունակել ուսումը

Ստորև բերված զծապատկերում կարող ենք տեսնել, թե ինչ ինտենսիվությամբ են ուսանողներն մասնակցում դասըթնացներին (ժամանակ հատկացնում ուսմանը) ըստ մասնագիտական ուղղվածության.




Գծապատկեր 1: Ուսման ինտենսիվությունն ըստ մասնագիտական ուղղվածության

Եթե ներկայումս ճարտարագիտական մասնագիտություններով մագիստրատուրայի ուսանողները համեմատաբար ավելի քիչ են, ապա այստեղ կարող ենք տեսնել, որ այդ ուղղությունը առաջատար դիրքերում է ուսումը շարունակելու մտադրության տեսանկյունից (78%): Մինչդեռ հակառակ միտում է նկատվում առողջապահության ոլորտում ուսանողների մոտ՝ ընդամենը 68%-ն է մեծ ցանկություն հայտնել շարունակելու ուսումը:

### 1.3. Ժողովրդագրական պատկեր


#### Տարիք

Ստացված տվյալների համաձայն Հայաստանում ուսանող երիտասարդների տարիքը բավականին ցածր է: Հարցված ուսանողների մեջիանային տարիքը 20 է, իսկ միջին տարիքը՝ 21:




Գծապատկեր 2: Հարցվածների տարիքային բաշխումը

Բակալավրիատի ուսանողների միջին տարիքը 21-ն է, իսկ մագիստրոսական ծրագրով սովորողներինը 24-ը: Որոշակի տարիքային տարբերություններ կարող ենք տեսնել նաև ուսանողների մոտ ըստ մասնագիտական ուղղվածության.



Գծապատկեր 3: Տարիքային բաշխումն ըստ մասնագիտական ուղղվածության

Ինչպես տեսնում ենք վերոհիշյալ գծապատկերից համեմատաբար առավել «երիտասարդ էն» ճարտարագիտական և կիրառական մաթեմատիկայի ուղղվածությամբ սովորող ուսանողները (83%-ը 21 տարեկան և ավելի փոքր է): Առավել «տարեց» են կրթության և զյուղատնտեսության մասնագիտական ուղղվածության ուսանողները:



**Գծապատկեր 4:** Խմբավորված տարիքն ըստ ուսանողների բնութագրիչների

	Բոլոր ուսանողները	Եգական	Արական	Բակալավր	Սագիստոս	Ցածր ինտենսիվ ություն	Միջև 2 տարվա ընթացքում	2 տարի և ավելի ուշ
Միջին	21	21	22	21	25	22	20	25
Մեջիանային	20	20	21	20	23	21	20	24
Միջին քառ. 2	4	3	4	3	4	5	3	5

**Աղյուսակ 9:** Ուսանողների միջին տարիքն ըստ հիմնական բնութագրիչների

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 4-ում բակալավրիատում սովորող ուսանողների մեծ մասը մինչև 21 տարեկան է (82%): Սագիստրատորայում սովորող ուսանողների միջին տարիքը 25-ն է:


Հարցված ուսանողների ծնողների 80%-ն ունեն բարձրագույն կրթություն: Այս փաստն անուղղակիորեն վկայում է այն մասին, որ բարձրագույն կրթություն ունենալն արժեք է հիմնականում այն ընտանիքներում, որտեղ ծնողներից առնվազն մեկն ունի բարձրագույն կրթություն:

Ուսանողների սոցիալ-տնտեսական կենսապայմանները Հայաստանում–Ազգային գեկույց Հայաստան-EUROSTUDENTV

## Մեռ

Իգական սերի ուսանողները կազմում են հարցման մասնակիցների 73%-ը, արականը՝ 27%-ը: Արական սերի ներկայացուցիչների ցածր տոկոսը պայմանավորված է Հայաստանին բնորոշ որոշ առանձնահատկություններով:


1. Պարտադիր զինվորական ծառայությունը;
2. Արական սերի ներկայացուցիչների ցածր առաջադիմությունը, որը հաճախ խոչընդուն է հանդիսանում ԲՈՒՀ ընդունվելու կամ ավարտելու համար;
3. Իգական սերի ներկայացուցիչները ավելի շատ հնարավորություններ ունեն շարունակելու ուսումը. որպես կանոն արական սերի ներկայացուցիչները առավել վաղ են սկսում եկամուտ վաստակել, ինչը խոչընդունում է նրանց ուսմանը:



Գծապատկեր 5: Ուսանողների բաշխումն ըստ սերի և մասնագիտական ուղղվածության

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 5-ում, իգական սերի ներկայացուցիչները գերակշռում են հումանիտար գիտություններում/արվեստում և կրթության ոլորտներում: Իսկ տղամարդիկ գերակշռում են ճարտարագիտական, առողջապահության, գյուղատնտեսության ոլորտներում: Կիրառական գիտությունների և սոցիալական գիտությունների

մասնագիտական ուղղվածությունների դեպքում կանաց և տղամարդկանց թիվը զրեթե հավասար է:




Գծապատկեր 6: Ուսանողների բաշխումն ըստ սեռի և հիմնական բնութագրիների

Գծապատկեր 6-ում կարող ենք տեսնել, որ իգական և արական սեռի ներկայացուցիչների բաշխումը հիմնականում համապատասխանում է ընտրանքում երկու սեռերի ներկայացուցիչների բաշխման տրամարանությանը: Այնուամենայնիվ կան որոշ հետաքրքրական շեղումներ այդ բաշխումից. այսպես, մագիստրատուրայում սովորող ուսանողների մեջ գերակշռում են իգական սեռի ներկայացուցիչները (73%-ը), իսկ ուսումը շարունակելու մտադրություն չունեցողների 75%-ը կազմում են կանայք: Ինչպես արդեն նշել ենք, մագիստրատուրայում արական սեռի ներկայացուցիչների ցածր սովորը պայմանավորված է բանակում պարտադիր ծառայության գործոնով և հնարավորինս շուտ աշխատանք ունենալու անհրաժեշտությամբ:

## Խնամքի տակ գտնվողներն ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների

Հարցված ուսանողների ընդամենը 4.6%-ն է նշել, որ երեխա ունի: Ընդ որում, երեխա ունեցողների 46%-ն ունի 1 երեխա, 44%-ը՝ 2 երեխա, իսկ 10%-ը՝ 3 երեխա:



Գծապատկեր 7: Առնվազն մեկ երեխա ունեցողների բաշխումը

Հետաքրքրական է, որ երեխա ունեցողների 43%-ը մինչև 21 տարեկան է, նրանց հաջորդում են 30 և ավելի տարեկան ուսանողները, մինչդեռ ընդամենը 26%-ն է բաժին ընկնում 22-29 տարեկան ուսանողներին: Երեխա ունեցողների 47%-ը կանայք են, 53%-ը տղամարդիկ: Երեխա ունեցող ուսանողների ընդամենը 9%-ն է, նշել որ ուսումը շարունակելու մտադրություն չունի, 69%-ը նշել է, որ մեծ ցանկություն ունի շարունակելու: Սա անուղղակիորեն վկայում է այն մասին, որ երեխա ունենալով ուսանողների այս խմբի համար լրացուցիչ խոչընդոտ չի հանդիսանում ուսումը շարունակելու համար:

Ստորև ներկայացված աղյուսակում կարող ենք տեսնել երեխա ունեցող ուսանողների բաշխումը ըստ նրանց ամենակրտսեր երեխայի տարիքային խմբի:


	%
1-3 տարեկան	67
4-6 տարեկան	13
7-3 տարեկան	5
10 և ավելի տարեկան	15

Աղյուսակ 10: Ամենափոքր երեխաների տարիքային բաշխումը

Չնայած որ հարցված ուսանողների թվի ընդամենը 5% երեխա ունի, նրանց 85% մինչև 10 տարեկան է: Այս տարիքում երեխաները մեծ կախվածություն ունեն ծնողներից, և այս փաստը կարող է խոչընդոտել ծնողների ուսմանը:

### Հասուլի կարիք ունեցող ուսանողներ

Հարցված ուսանողների 10%-ն ունի հասուլի կարիք, առողջական երկարատև խնդիրներ կամ ֆունկցիոնալ սահմանափակումներ: Ըստ որում այդ ուսանողներից միայն 14%-ն (33 ուսանող) են գտնում, որ հիվանդությունը նրանց համար լուրջ խոչընդոտ է հանդիսանում ուսումնառության համար (գծապատկեր 8):




Գծապատկեր 8: Ընդհանուր առմամբ, որքանո՞վ են Ձեր սահմանափակումները խոչընդունում Ձեր ուսումնառությանը

Հատուկ կարիք, առողջական երկարատև խնդիրներ կամ ֆունկցիոնալ սահմանափակումներ ունեցող ուսանողները (247 ուսանող) որոշ դեպքերում նշել են 1-ից ավելի խանգարումներ.

	N
Սովորելուն խոչընդոտող խնդիրներ(հենաշարժական խնդիրներ, դիալեքսիա)	31
Տեղաշարժման խնդիրներ	29
Զգայական անբավարարություն /տեսողություն կամ լսողություն	28
Այլ առողջական երկարատև խնդիրներ	26
Մտավոր առողջական խնդիրներ	26
Խրոնիկ հիվանդություններ	24

Աղյուսակ 11: Արդյոք ունե՞ք հատուկ կարիք, առողջական երկարատև խնդիրներ կամ ֆունկցիոնալ սահմանափակումներ

Ուսանողների այս խմբում 26%-ը նշել է, որ հանրության կամ ինստիտուտների կողմից որևէ օժանդակություն չի ակնկալում ուսմանն առնչվող սահմանափակումներում, իսկ 31%-ը նշել է, որ բավարարված չէ ստացված օժանդակությունից:



Գծապատկեր 9: Ընդհանուր առմամբ, որքանո՞վ են հանրությունը և/կամ ինստիտուտներն օժանդակում Ձեզ հաղթահարելու ուսմանն առնչվող սահմանափակումներում (%), ըստ առողջական խնդրի տեսակի

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 9-ից օժանդակության համեմատաբար ավելի քիչ կարիք են զգում զգայական անբավարարություն ունեցող ուսանողները (39%): Իսկ հանրության և ինստիտուտների օժանդակության պակասից ամենաշատը դժգոհ են հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողները (44%):

## **Ուսանողների շարժունությունը/ միզրանտ ուսանողներ**

Հարցված ուսանողների սոցիալ-ժողովրդագրական ամբողջական պատկերը ստանալու համար անդրադարնանք ուսանողների և նրանց ծնողների ծննդավայրին: Ստորև բերված գծապատկերում ներկայացված է ուսանողների բաշխումն ըստ ծննդավայրի խմբավորված գործակցի և նրանց հիմնական սոցիալական և կրթական բնութագրիների:

<<Որ երկրում եք ծնվել Դուք և Ձեր ծնողները>> հարցի հիման վրա ուսանողները բաժանվել են երեք խմբի՝ տեղաբնակ ուսանողներ<sup>3</sup>, 1-ին սերնդի միզրանտ ուսանողներ<sup>4</sup>, 2-րդ սերնդի միզրանտ ուսանողներ<sup>5</sup>:


Ինչպես տեսնում ենք գծապատկեր 10-ից զրեթե բոլոր խմբերում գերակշռում են <<ծնունդով տեղացիները>>:

Պատկերը փոքր ինչ այլ է մազիստրատուրայում սովորող ուսանողների և ճարտարագիտական ուղղությունն ընտրած ուսանողների դեպքում: Ճարտարագիտական ուղղությամբ սովորող ուսանողների ընդամենը 37%-ն է, որ իր ծնողների հետ մեկտեղ ծնվել է Հայաստանում, այդ ուղղությամբ սովորող ուսանողների մյուս 37%-ը ծնողների հետ մեկտեղ ծնվել են արտերկրում:

<sup>3</sup> **Տեղաբնակ ուսանողներ-** Թե՛ ծնողները և թե՛ ուսանողները ծնվել են Հայաստանում

<sup>4</sup> **1<sup>st</sup> generation migrant** = Թե՛ ծնողները և թե՛ ուսանողները ծնվել են արտերկրում

<sup>5</sup> **2<sup>nd</sup> generation migrant** = Ծնողներից առնվազն մեկը ծնվել է արտերկրում, իսկ ուսանողը Հայաստանում




Գծապատկեր 10: Ուսանողների բաշխումն ըստ սեփական և ծնողների ծննդավայրի և հիմնական բնութագրիների

Մազիստրատորայում սովորող ուսանողների 23%-ն իրենց ծնողների հետ մեկտեղ (1<sup>st</sup> generation) ծնվել են արտերկրում, մինչդեռ բակալավրիատի դեպքում այդ թիվը կազմում է 15%:

## Գլուխ 2. Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունելությունը

Համաձայն <<ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության կարգ>>-ի բուհերն առկա ուսուցմամբ ընդունելությունը կատարում են տվյալ ուսումնական տարվա համար ՀՀ կառավարության հաստատած մասնագիտությունների ցանկի համաձայն: Ընդ որում ԲՈՒՀ-եր կարող են ընդունվել միջնակարգ, նախնական մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթություն ունեցող անձինք (շրջանավարտներ), առանց տարիքային սահմանափակման:<sup>6</sup>

Ստորև բերված զծապատկերում ներկայացված է հարցվողների բաշխումն ըստ որակավորման, որը ստացել են առաջին անգամ դպրոցն ավարտելիս:




Գծապատկեր 11: Առաջին անգամ դպրոցն ավարտելիս ի՞նչ որակավորում եք ստացել (օր.՝ թերի միջնակարգ կամ ընդհանուր միջնակարգ կրթական մակարդակ)

Հարցվածների 6%-ն իրենց կրթական որակավորումը ստացել են արտերկրում (Ռուսաստանում-1.7%, Վրաստանում-1.4%, այլ երկրներում-2.8%): 94%-ն ուսումն ավարտել

<sup>6</sup>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՑՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ <http://media.asue.am/upload/BK.pdf>


Են Հայաստանում: Հստ ստացած որակավորման վայրի՝ Հայաստանում ուսում ստացածների քաշիումը ներկայացված է ստորև բերված գծապատկերում.



Գծապատկեր 12: Որտե՞ղ եք ստացել Ձեր առաջին որակավորումը. ըստ մարզերի

## 2.1. Որակավորումը ԲՈՒՀՀ ընդունվելիս ըստ հիմնական բնութագրիչների

Հարցված ուսանողների գերակշռող մեծամասնությունը ԲՈՒՀՀ է ընդունվել միջին մասնագիտական կրթության որակավորմամբ (70%):



### Գծապատկեր 13: Ուսանողների որակավորումը նախքան ԲՈՒՀ-ն ընդունվելն ըստ հիմնական բնութագրիչների

Գծապատկեր 13-ում երևում է, որ իգական սերի ներկայացուցիչները փոքր ինչ ավելի շատ են ընդունվել միասնական ընդունելության քննություններով (73%), քան արական սերի ներկայացուցիչները (65%): Ընդ որում, տղամարդիկ, որպես հանրապետական և միջազգային օլիմպիադաներում հաղթողներ ավելի շատ են ընդունվել ԲՈՒՀ, քան կանայք:

Ինչպես տեսնում ենք առաջին երկու տարրական ընթացքում (*Direct transition*<sup>7</sup>) ԲՈՒՀ ընդունված ուսանողների բաշխումն ըստ նախքան ընդունվելը ստացած որակավորումների գրեթե համընկնում է բոլոր ուսանողների բաշխման հետ: Մինդեռ նրանք, ովքեր ԲՈՒՀ են ընդունվել ավելի քան երկու տարրական ընդունված միջուկում (Delayed transition<sup>8</sup>), բոլորովին այլ որակավորմամբ են ընդունվել. Այս դեպքում միջին մասնագիտական կրթությամբ ընդունվածներն ավելի շատ են (29%), քան վերոհիշյալ մյուս խմբերում:

<sup>7</sup>Միջնական տարրական հետո ԲՈՒՀ ընդունվածներ (*Direct transition*)՝ ավարտելուց հետո միջնական տարրական համար միջնական կրթություն ստացածները

<sup>8</sup>2 տարի և ավելի ուշ ԲՈՒՀ ընդունվածներ (*Delayed transition*)՝ ավարտելուց հետո 2 տարրի և ավելի ուշ ԲՈՒՀ ընդունվածները

## 2.2. Ուսանողների աշխատանքային փորձառությունը

Ընդհանուր առմամբ ուսանողները լավատես են ավարտելուց հետո աշխատանք ունենալու հարցում: Հարցված ուսանողների 62%-ը լավ է գնահատում ավարտելուց հետո ներպետական մակարդակում աշխատաշուկայում իրենց հնարավորությունը, 11%-ը՝ դժվարացել է պատասխանել այս հարցին և միայն 12%-ն է վատ գնահատել աշխատանք ունենալու հնարավորությունը: Միջազգային մակարդակում պատկերը փոքր ինչ այլ է. այստեղ 40%-ն է լավ գնահատում հնարավորությունները, քիչ հավանական են համարում 16%-ը, իսկ հարցվածների 23%-ը դժվարացել են գնահատել:

Հարցվածների մեծ մասը՝ 92%-ը նախքան ԲՈՒՀ ընդունվելը աշխատաշուկայում որևէ փորձ չեն ունեցել: Ստորև ներկայացված աղյուսակում բերված են այն խմբերը, որոնք նախքան ԲՈՒՀ ընդունվելը աշխատանքային որևէ փորձ են ունեցել.


Հիմնական վճարվող աշխատանք ունեցող 2 տարի և ավելի ուշ ԲՈՒՀ ընդունված ուսանողների %-ը նախքան ԲՈՒՀ ընդունվելը	26.2
Հիմնական վճարվող աշխատանք ունեցող 22-24 տարեկան ուսանողների տոկոսը %-ը նախքան ԲՈՒՀ ընդունվելը	12.5
Բարձրագույն կրթություն չունեցող ուսանողների %-ը նախքան ԲՈՒՀ-ում կրթությունը շարունակելը	10.7

Աղյուսակ 12: Հիմնական աշխատանք ունեցող ուսանողների բաշխումն ըստ տարրեր խմբերի

Ինչպես տեսնում ենք աղյուսակից ուսումն ավարտելուց հետո երկու տարուց ավելի ուշ ԲՈՒՀ ընդունվածների 26%-ը նախքան ընդունվելը հիմնական վարձատրվող աշխատանք են ունեցել:

## 2.3. Միջնակարգ կրթություն ստացածների ուսման ընդհատումները ԲՈՒՀ-ում ըստ հիմնական բնույթագրիչների

Հարցված ուսանողների 88%-ը երբևէ չեն ընդհատել կրթությունը ԲՈՒՀ ընդունվելուց հետո.



Գծապատկեր 14: Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելուց հետո երբևէ ընդհատել եք Ձեր կրթությունն առնվազն մեկ տարով

Ուսանողների 9%-ը առնվազն մեկ տարով ընդհատել է կրթությունն առաջին անգամ ԲՈՒՀ ընդունվելու և ավարտելու ընթացքում, և ընդամենը 3%-ն է ընդհատել կրթությունը ԲՈՒՀ-ն ավարտելու և նորից ընդունվելու ընթացքում:

### ■ Բուհ ընդունվելուցհետո ուսումն չեմ ընդհասել

■ Ընդհասուել եմ կրթությունս սառաջին տևազարդության ԲՈՒՀ ընդունվելու և ավարտելու ընթացքում

■ Ծնողիսուուել եմ կրթությունու ԲՈՒՀ-ի ուսուուուելու և նորից ընդունուելու ընթացքում




### Գծապատկեր 3: Ուսման ընդհատումը ԲՈՒՀ-ում ըստ հիմնական բնութագրիչների

Ինչպէս տեսնում ենք գծապատկեր 15-ից ԲՈՒՀ ընդունվելու և ավարտելու ընթացքում առնվազն մեկ տարով ուսումն ընդհատածները հիմնականում արական սերի ներկայացուցիչներ են, ըստ երևույթին սա պայմանավորված է բանակում ծառայելու գործոնով և տղաների համեմատաբար ցածր առաջադիմությամբ:

Հատկանշական է, որ տարիքի գործոնը ուղիղ համեմատական է ուսման ընթացքում ընդհատումների հետ, որքան ուսանողի տարիքը բարձր է, այնքան ընդհատումներն ավելի շատ են:

## 2.4. Նախքան ԲՈՒՀ-ն ընդունվելը որակավորում ստանալու և ԲՈՒՀ ընդունվելու միջև ընկած ժամանակահատվածը




Գծապատկեր 16: Նախքան ԲՈՒՀ ընդունվելը որակավորում ստանալու և ԲՈՒՀ ընդունվելու միջև ընկած ժամանակահատվածը

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 16-ից՝ հարցված ուսանողների մեծ մասը (82%) ԲՈՒՀ է ընդունվել դպրոցն ավարտելուց հետո մինչև 12 ամսավա ընթացքում, 11%-ը ավելի քան 2 տարվա ընթացքում և ընդամենը 7%-ը 12-24 ամսավա ընթացքում:

Միջին ամսական ընդմիջումը բոլոր ուսանողների համար կազմում է 11.0 ամիս: Ներկայումս ոչ ԲՈՒՀ-ական կրթություն ստացողների համար այդ ցուցանիշը կազմում է 19.7 ամիս: Հատկանշական է, որ եթե հումանիտար ուղղությամբ սովորողների համար միջին ընդմիջումն ամիսներով մոտ է ընդհանուր միջինին՝ 11.5 ամիս, ապա ճարտարագիտական կրթությամբ սովորողների համար այն կազմում է 7.6 ամիս, ինչը վկայում է այն մասին, որ այս ուղղությունն ընտրածների համար ի սկզբանե առավել քիչ ժամանակ է հարկավոր եղել ԲՈՒՀ ընդունվելու համար, ինչը ՀՀ ԲՈՒՀ-ական համակարգի դեպքում իր հերթին պայմանավորված է տվյալ ուղղությամբ ի սկզբանե առաջարրված տեղերի թվի համեմատ դիմորդների ցածր թվով և առավել ցածր գնահատականների անցողիկ լինելով:

## 2.5. Մասնագիտական ուղղվածությունը ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների

Ինչպես և արդեն նշվել է, հարցված ուսանողների մեծ մասը բաժին է ընկնում հումանիտար գիտությունների և արվեստի ուղղությամբ սովորող ուսանողներին (28%) և սոցիալական, բիզնեսի և իրավագիտությամբ սովորող ուսանողներին (26%), նրանց հաջորդում են ձարտարագիտական ուղղությունը (17%) և մյուս ճյուղերը: Այնուամենայնիվ կախված ուսանողների տարբեր խմբերից՝ այս առանձնահատկությունները փոքր ինչ տարբերվում են. Նշանակալի տարբերություն ըստ սեռի կարող ենք տեսնել զարգացակեր 17-ում. այսպէս, եթե իգական սեռի ներկայացուցիչների 1/3-րդից ավելին (39%) սովորում է հումանիտար և արվեստի ուղղությամբ, ապա տղաների մոտ հավասար չափով գերակշռում են սոցիալական գիտությունները և ձարտարագիտական մասնագիտությունները (26% յուրաքանչյուրը):



Գծապատճեր 4: Մասնագիտական ուղղվածությունն ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների

Որոշակի տարբերություն կարող ենք տեսնել նաև դպրոցն ավարտելուց հետո առավել ուշ ԲՈՒՀ ընդունվածների և շուտ ընդունվածների մեջ: Ինչպես տեսնում ենք, առավել ուշ ընդունվածների 37%-ն ընտրել է սոցիալական գիտությունները, բիզնեսը և

իրավագիտությունը: Ըստ երևոյթին՝ աշխատաշուկայում տեղ գտնելու առավել մեծ հնարավորություններ ունենալու ակնկալիքով, որի մասին է վկայում նաև տարիքով պայմանավորված ընտրությունը՝ որքան ուսանողն ավելի մեծ է տարիքով, այնքան մեծ է նրա ներգրավվածությունը սոցիալական գիտություններում, բիզնեսում և իրավագիտությունում: Հարցվածների 89.5%-ը շաբաթվա ընթացքում միջինում 30 ժամից ավելի են ծախսում ուսումնառվող դասընթացների և ինքնուրույն պարապմունքների վրա, 7.6%-ը 21-30 ժամ են ծախսում, 2.8%-ը՝ 11-20 ժամ:

## Գլուխ 3: Ուսանողների սոցիալական պատկանելիությունը

### 3.1. Ուսանողների ծնողների գրադաժությունը

Հարցված ուսանողների հայրերի միայն 2.4%-ն է, որ երբևէ աշխատաշուկայում ներգրավված չի եղել, մայրերի դեպքում այս ցուցանիշը կազմում է 15.7%:

Ուսանող ների ծնողներ ի թիվը	Ուսան ողների հայրեր ի թիվը	40-60 տարեկան գրադաժ արական սեռի ներկայացուց իչների թիվը	Ուսան ողների մայրեր ի թիվը	40-60 տարեկան գրադաժ իզական սեռի ներկայացուց իչների թիվը	
1. Ղեկավար, պաշտոնատար	615	534	27594	201	12232
2. Բարձրակարգ մասնագետ	724	494	15677	689	34148
3. Տեխնիկ և կրտսեր մասնագետներ	166	167	10910	96	22339
4. Օժանդակ աշխատող	79	85	5254	52	7587
5. Սպասարկման և առևտրի ոլորտի մասնագետ	205	178	10795	230	22403
6. Գյուղատնտեսության, անտառատնտեսության, ձկնաբուծության հմուտ մասնագետ	88	122	82471	60	85645
7. Արհեստավոր	180	273	38088	32	10013
8. Սարքավորումների և մեքնաների շահագործող օպերատոր	34	49	23127	13	871
9. Տարրական գրադաժուներ	38	43	15615	86	14719
10. Զինվորական	62	107	4375	29	0

Աղյուսակ 13: Ուսանողների ծնողների գրադաժությունն ամբողջ բնակության հետ համեմատած

Բավական հետաքրքիր պատկեր կարող ենք տեսնել աղյուսակ 13-ում. մասնավորապես՝ եթե փորձենք հարցվածներին բաժանել ըստ ծնողների ունեցած աշխատանքի և առանձնացնենք երկու հիմնական խումբ 1-2 (անվանենք պայմանականորեն բարձր պաշտոն) և 3-10

(անվանենք պայմանականորեն ցածր պաշտոն), ապա կարող ենք նկատել, որ հարցված ուսանողների ծնողների կեսից ավելին (61%) իրենց վերջին աշխատավայրում զբաղեցրել են առավել բարձր պաշտոններ<sup>9</sup>: Այս ցուցանիշը համապատասխանում և գրեթե համընկնում է ՀՀ 40-60 տարեկան տնտեսապես ակտիվ արական սեռի բնակչության թվին՝ 64%: Այս փաստը վկայում է այն մասին, որ ուսանողների դեպքում առավել որոշիչ գործոն է հանդիսանում հոր, քան մոր աշխատավայրը: Այս մասին է վկայում նաև ըստ ԱՎԾ տվյալների մայրերի համապատասխան ցուցանիշը՝ ՀՀ տնտեսապես ակտիվ բնակչության 40-60 տարեկան կանանց միայն 22%-ն է համեմատարար բարձր պաշտոն զբաղեցնում, գրեթե 3 անգամ ավելի քիչ, քան տղամարդկանց դեպքում:<sup>10</sup>

<sup>9</sup>Ցուցանիշի հաշվարկման հիմքում ընկած են թե՛ հայրերի, և թե՛ մայրերի զբաղեցրած պաշտոնները. ընդ որում հաշվի է առնվել ուսանողի երկու ծնողներից առավել բարձր պաշտոն զբաղեցրածի աշխատանքը:

<sup>10</sup>Այս դեպքում հարցված ուսանողների մայրերի աշխատանքի ցուցանիշը չի համապատասխանում ԱՎԾ տվյալների հետ. ըստ ստացված տվյալների թե՛ հայրերը, և թե՛ մայրերը հավասար չափով բարձր պաշտոններ են զբաղեցնում: Այս միտումը կարելի մեկնաբանել հետևյալ կերպ. տարեցտարի ուսման վարձերի թանկացմանը և կենցաղային և ուսման հետ կապված ծախսերի ավելացմանը զուգահեռ, ավելանում է նաև այն ընտանիքների թիվը, որտեղ ոչ միայն երկու ծնողն էլ աշխատում են, այլև ձգուում են առավել բարձր վարձատրվող պաշտոններ զբաղեցնել: Այլ կերպ ասած՝ ծնողների կատարած աշխատանքն ուղղի համեմատական է ԲՈՒՀ-ում սովորող ուսանող ունենալու հետ: Այս պարագայում ստացված տվյալները ցույց են տալիս ոչ թե շեղում պաշտոնական տվյալներից, այլ նոր միտում:

### **3.2. Ուսանողների ծնողների ամենաբարձր կրթական աստիճանը**

Հստ ԱՎԾ տվյալների ՀՀ բնակչության միայն 23% և 21%-ը (*համապատասխանաբար տղամարդկանց և կանանց համար*) ունի բակալավրի և ավելի բարձր որակավորում: Մեր հետազոտության դեպքում այդ թիվը գրեթե 3 անգամ ավելի մեծ է, և տղամարդկանց դեպքում կազմում է 64%, իսկ կանանց համար՝ 63%:

	Ուսանողների ծնողների թիվը	Ուսանողների հայրերի թիվը	40-60 տարեկան գրադաժան արական սեռի ներկայացուցիչ ների թիվը	Ուսանողների մայրերի թիվը	40-60 տարեկան գրադաժան իգական սեռի ներկայացուցիչ ների թիվը
Տարրական ոչ լրիվ միջնակարգ, հիմնական միջնակարգ (ԿՍՍԴ 0,1,2)	46	70	13555	53	13418
Միջնակարգ (ընդհանուր) (ԿՍՍԴ 3)	213	295	69395	269	51018
Նախնական մասնագիտական (նախնական մասնագիտական ուսումնարաններ) (ԿՍՍԴ 4)	206	224	573383	207	582312
Միջնակարգ մասնագիտական (12-րդ դասարանի բազայի հիման վրա) (միջին մասնագիտական քոլեջներ) (ԿՍՍԴ 5)	189	216	347252	257	380767
Բակալավրիատ կամ համարժեք (ԿՍՍԴ 6)	736	683	172486	692	165818
Մագիստրատուրա կամ համարժեք (ԿՍՍԴ 7)	716	560	114990	618	110545
Ասպիրանտուրա կամ համարժեք (ԿՍՍԴ 8)	213	170	7838	127	4745


**Աղյուսակ 14: Ուսանողների ծնողների կրթամակարդակն ըստ ԿՍՍԴ դասակարգման, ընդհանուր  
բնակչության թվի հետ համեմատած**

Այս փաստն ուղղակիորեն վկայում է այն մասին, որ ծնողների կրթությունը էական նշանակություն է ունեցել իրենց երեխաների՝ բարձրագույն կրթություն ստանալու հարցում:

### 3.3. Ուսանողների ծնողների գրաղվածությունը ըստ ամենաբարձր կրթական

#### աստիճանի


Ինչպես տեսնում ենք, զծապատկեր 18-ում ուսանողների ծնողների աշխատանքի բնույթը սերտորեն կապված է նրանց ամենաբարձր կրթամակարդակի հետ: Այլ կերպ ասած, որքան ավելի բարձր է կրթամակարդակը, այնքան նրանք ավելի բարձր պաշտոն են զբաղեցնում/թել:



Գծապատկեր 18: Ուսանողների ծնողների գրաղվածությունն ըստ ամենաբարձր կրթական աստիճանի

### 3.4. Ուսանողների ծնողների ամենաբարձր կրթական աստիճանը ըստ ուսանողների հիմնական բնութագրիների

Եթե անդրադառնանք ուսանողների տարբեր խմբերի համար նրանց ծնողների ամենաբարձր կրթամակարդակի նկարագրությանը, կարող ենք նկատել որոշ առանձնահատկություններ:




**Գծապատկեր 19:** Ուսանողների ծնողների ամենաբարձր կրթմակարդակն ըստ հիմնական բնույթագրիչների

Գծապատկեր 19-ում ծնողների կրթամակարդակի բաշխումը գրեթե միանման է ուսանողների բոլոր խմբերի համար: Բացառություն են կազմում ըստ տարիքի և դպրոցից ԲՈՒՀ ընդունվելու ժամանակահատվածի հետ կապված բաշխումները: Մասնավորապես կարող ենք նկատել, որքան ուսանողների տարիքն ավելի բարձր է, այնքան ավելի ցածր է նրանց ծնողների ամենաբարձր կրթամակարդակը, այս հանգամանքը սերտորեն կապված է ԲՈՒՀ ընդունվելու հետ, որքան ավելի ուշ են ընդունվել ԲՈՒՀ դպրոցն ավարտելուց հետո, այնքան ավելի ցածր է ծնողների ստացած ամենաբարձր կրթամակարդակը:

### 3.5. Ուսանողների ծնողների սոցիալական կարգավիճակը

Հարցված ուսանողների կեսից ավելին իրենց ծնողների սոցիալական դիրքը գնահատում են ցածր, 35%-ը միջին և միայն 11%-ն է բարձր գնահատում ծնողների սոցիալական դիրքը:



Գծապատկեր 20: Ուսանողների ծնողների սոցիալական կարգավիճակն ըստ ուսանողնրի գնահատականի

Հարցված ուսանողների ծնողների 72%-ն ըստ հետազոտության արդյունքների ստացել են բարձրագույն կրթություն, ուսանողների՝ այս խմբի համար բաշխումն ըստ ծնողների սոցիալական դիրքի համընկնում է ընդհանուր բաշխման հետ: Սակայն աղյուսակ 15-ում մենք կարող ենք տեսնել, որ մյուս 28% ուսանողների մոտ ծնողների սոցիալական դիրքի բաշխումն այլ տեսք ունի. ցածր սոցիալական դիրք ունեցողներն ավելի քիչ են, իսկ բարձր դիրք ունեցողներն ավելի շատ բարձրագույն կրթություն ստացած ծնողների համեմատ:

	Բոլոր ուսանողները	Տարրական ոչ լրիվ միջնակարգ, հիմնական միջնակարգ (ԿՄՄԴ 0,1,2)	Միջնակարգ (ընդհանուր) (ԿՄՄԴ 3)	Նպանական մասնագիտական (ԿՄՄԴ 4)	Միջնակարգ մասնագիտական (միջին մասնագիտական բղենձներ) (ԿՄՄԴ 5)	Բակալավրի ատ կամ համարժեք (ԿՄՄԴ 6)	Մագիստրաց ուրա կամ համարժեք (ԿՄՄԴ 7)	Ասպիրանտուրա կամ համարժեք (ԿՄՄԴ 8)
Յաճք սոց. դիրք	54	67	47	49	43	51	57	72
Միջին սոց. դիրք	34	28	32	37	42	40	32	21
Բարձր.սոց. դիրք	11	5	21	15	15	9	11	7


Աղյուսակ 7: Ծնողների սոցիալական դիրքն ըստ կրթական մակարդակի

Այլ կերպ ասած կրթամակարդակի գործոնը ծնողների դեպքում հակադարձ համեմատական է սոցիալական դիրքին:

## Գլուխ 4: Ուսանողների կացություն

### 4.1. Բնակարանային պայմաններ

Հարցված ուսանողների 82.2%-ը ներկայում ապրում է ծնողների հետ: 18%-ը ծնողների հետ չեն ապրում:




Գծապատկեր 21: Ուսանողների բնակման ձևը

Ընդ որում, առանձին ապրող ուսանողների 5%-ն ապրում է ուսանողական հանրակացարանում:

Ծնողներից առանձին ապրող ուսանողների 3%-ն ապրում է զուգընկերոց և երեխաների հետ, 9%-ն՝ այլ անձանց հետ, իսկ 6%-ն ապրում է միայնակ:

	Բոլոր ուսանողները	Մինչև 21 տարեկան	22-24 տարեկան	25-29 տարեկան	30 և ավելի տարեկան
Ուսանողական հանրակացարանում ապրող	116	65	28	6	17
Ուսանողական հանրակացարանում չապրող	2294	1737	380	99	78

Աղյուսակ 16 Ուսանողական հանրակացարանում ապրողներն ըստ տարիքի




**Գծապատկեր 5:** Ուսանողների բնակման ձևն ըստ տարիքի

Ծնողների հետ ապրող ուսանողների 78%-ը մինչև 21 տարեկան են: Համանման է պատկերը նաև այլ անձանց հետ ապրողների մոտ: Անկախ նրանից, թե ում հետ են ապրում ուսանողները, հետաքրքրական է, որ 22-24 տարեկանները զբերե հավասարաշափ են ներկայացված այդ խմբերում (21-22%), բացառությամբ ծնողների հետ ապրողների խմբի: Ինչպես և ենթադրվում էր, զուգընկերոց և կամ երեխաների հետ ապրող ուսանողների 49%-ը 25 և ավել տարեկան է, այնուամենայնիվ բավական մեծ % են կազմում նաև զուգընկերոց հետ ապրող մինչև 21 տարեկանները ուսանողների ընդհանուր թվի մեջ:

#### 4.2. Բնակման ձևն ըստ սեռի և կրթության


Ինչպես տեսնում ենք գծապատկեր 22-ից, եթե բակալավրիատում սովորող ուսանողների 84%-ն է ապրում ծնողների հետ, ապա մագիստրատուրայում՝ սովորողների 76%-ն է: Այս ցուցանիշը սերտորեն փոխկապված է տարիքի գործոնի հետ:



Գծապատկեր 23: Բնակչության ձևութափ սեռի և որակավորման աստիճանի

Հետաքրքրական է, որ եթե միայնակ ապրող ուսանող աղջկները կազմում են 11%-ը, ապա տղաների 7%-ն է ապրում առանձին: Զուգընկերոց/երեխաների հետ ապրողները տղաները մոտ 3 անգամ ավելի շատ են, քան աղջկները:

#### 4.3. Բնակչության ձևութափ սոցիալական կարգավիճակի




Գծապատկեր 24: Բնակչության ձևութափ ծնողների կրթական աստիճանի

Գծապատկեր 24-ից կարող ենք մեկ հիմնական միտում նկատել, որ ծնողների բարձր կրթամակարդակն ուղիղ համեմատական է նրանց հետ ապրելու վաստի հետ: Ինչպես տեսնում ենք՝ տարրական և միջնակարգ կրթություն ունեցող ծնողների դեպքում, այլ անձանց հետ կամ առանձին ապրողների թիվն ավելի մեծ է: Նմանատիպ պատկեր, սակայն, կարող ենք տեսնել նաև զիտական աստիճան ունեցող ծնողների դեպքում, որտեղ նույնպես միայնակ ապրողները համեմատաբար շատ են:

#### **4.4. Կացության պայմաններն ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների**

Հարցված ուսանողների կեսից ավելին (56%) շատ գոհ է իր կացարանային պայմաններից, ընդ որում՝ ընդհանուր առմամբ ուսանողների 75%-ը բավարարված է իր կացարանով:




**Գծապատկեր 6: Ուսանողների բավարարվածությունը կացարանով ըստ բնակման ձեի**

Քանի որ ուսանողների մեծ մասն ապրում է ծնողների հետ, ապա բավարարվածությունը կենցաղային պայմաններից ծնողների հետ ապրող ուսանողների համար համանման է ընդհանուր բաշխմանը: Մինդեռ, ինչպես տեսնում ենք, ծնողների հետ չապրող ուսանողների 14%-ը նշել է, որ բավարարված չէ իր ներկայիս կենցաղային պայմաններից:

#### 4.5. Ծնողների հետ շապրոդ ուսանողների կացության հետ կապված ծախսերը

Ինչպես տեսնում ենք ներքոհիշյալ գծապատկերից, ծնողներից առանձին ապրելով հանդերձ՝



Գծապատկեր 26 : Կացության հետ կապված ամսական միջին ծախսերը

ուսանողները ֆինանսական կախվածության մեջ են գտնվում ծնողներից և կացության ծախսերի մեծ մասը հոգում են ծնողներից ստացված գումարով՝ միջինն ամսական վճարելով 106000 ՀՀ դրամ ծնողների տրամադրած գումարներից և հինգ անգամ ավելի քիչ՝ 20000 ՀՀ դրամ դրամ սեփական գրպանից:


Միջին ամսական ամենամեծ ծախսը բաժին է ընկնում այլ անձանց հետ ապրող ուսանողներին. 121000 ՀՀ դրամ ծնողներից և 18000 սեփական գրպանից:

Հետաքրքրական է, որ սեփական գրպանից ծախսերը համեմատաբար ավելի շատ են այն ուսանողների համար, որոնք միայնակ են ապրում, մինչդեռ գուզքնկերոջ/երեխաների հետ ապրողների դեպքում այն հասնում է նվազագույնի, քանի որ ծախսերը՝ բացի ծնողների կողմից ստանալուց, հոգում է նաև գուզքնկերը:

Այսպիսով, միջին ամսական կենցաղային ծախսերը ծնողների հետ շապրոդ ուսանողի համար կազմում է 126221 ՀՀ դրամ, իսկ հանրակացարանում ապրողների համար կազմում է 96673 ՀՀ դրամ:

#### 4.6. Բնակման ձեռն ըստ տնից դեպի ԲՈՒՀ ծախսած ժամանակի

Տնից բարձրագույն ուսումնական հաստատություն հասնելու համար ուսանողից միջինում պահանջվում է 34 րոպե: Հաշվի առնելով ՀՀ տարածքի չափերը՝ ուսանողների մեծ մասի համար պարտադիր չէ առանձնանալ ծնողներից և առավել մոտ հաստատվել ԲՈՒՀ-ին:



Գծապատկեր 27: Տնից դեպի ԲՈՒՀ ծախսած ժամանակը ըստ բնակման ձեր (միջին ժամանակահատվածը, միջին քառակուսային շեղում)

	Ծախսած ժամանակը (մեղիանա)	Ծախսած ժամանակը (թվ. միջին)	Միջին քառ. շեղում
Կացութան բոլոր ձևերը	30	34	25
Ծնողների/այլ հարազատների հետ	30	35	25
Ուսանողական հանրակացարանում	20	20	14

Աղյուսակ 17: Տնից դեպի ԲՈՒՀ ծախսած ժամանակը

## Գլուխ 5: Ուսանողների ծախսերը

### 5.1. Ուսանողների ծախսերն ըստ բնակման ձևի


Հետազոտության արդյունքները և ընդհանուր տրամաբանությունը վկայում են այն մասին, որ անկախ նրանից, թե ուսանողներն ապրում են ծնողների հետ, թե առանձին, ծնողներն այս կամ այն կերպ բավական մեծ ազդեցություն ունեն նրանց ամենօրյա կյանքում, ընդ որում, խոսքը գնում է նախ և առաջ նյութական ապահովության և կացության ծախսերը հոգալու մասին:

Ներքոհիշյալ աղյուսակում կարող ենք տեսնել, որ փոքր ինչ (3%) ավելացել են միայն կացության ծախսերն առանձին ապրող ուսանողների համար:

	Բոլոր ուսանողները (%)	Ծնողների հետ ապրող ուսանողները (%)	Ծնողների հետ չապրող ուսանողներ (%)
Կացության բոլոր ծախսերը	18	18	21
Մնունյ	11	12	10
Փոխադրամիջոց	7	7	4
Հաղորդակցություն	3	3	3
Առողջապահական ծախսեր	1	1	1
Երեխաների ինսամքի ծախսեր	0	0	1
Պարտքերի վճարում	1	1	1
Հասարակական և ժամանցային ծախսեր	5	5	4
Այլ կանոնավոր կենսական ծախսեր	10	10	8
Ուսմանվարձ	25	24	25
Ուսումնական նյութեր	16	15	20

Աղյուսակ 18: Ուսանողների ամսական ծախսերն ըստ բնակման ձևի

## 5.2. Ծնողների հետ չապրոդ ուսանողների ամսական ծախսերն ըստ վճարման աղյուրի



Գծապատկեր 28: Ծնողների հետ չապրոդ ուսանողների ամսական ծախսերն ըստ վճարման աղյուրի (%)

Ըստ համառության ծախսերը	Ըստ համառության ծախսերը (ՀՀ դրամ)	Մեփական գրապահներ (ՀՀ դրամ)	Ծնողների/զուգընկերոց/այլոց կողմից (ՀՀ դրամ)
Կացության ծախսերը	24718	1736	22982
Սնունդ	12032	1911	10121
Փոխադրամիջոց	4949	987	3962
Հաղորդակցություն	3298	621	2677
Առողջապահական ծախսեր	1467	383	1084
Երեխաների խնամքի ծախսեր	894	173	720
Պարտքերի վճարում	830	465	366
Հասարակական և ժամանցային ծախսեր	4736	1383	3353
Այլ կանոնավոր կենսական ծախսեր	9597	2362	7235
Ուսման վարձ	28777	4213	24563
Սոցիալական օժանդակություն	374	46	328

Ուսումնական նյութեր	23047	814	3055
Այլ կանոնավոր ուսումնական ծախսեր	2164	217	1947

#### Աղյուսակ 8: Ծնողների հետ չապրող ուսանողների ամսական ծախսերն ըստ ուսանողի (ՀՀ դրամ)

Աղյուսակ 19-ում ներկայացված են ծնողների հետ ապրող ուսանողների միջին ամսական ծախսերն ըստ տարբեր կետերի: Ընդ որում, մենք կարող ենք համեմատել, թե որքան է ծախսվում սեփական գրպանից, ծնողների կամ այլ անձանց կողմից: Ինչպես տեսնում ենք, ծախսերի մեծ մասը հոգում են այլ անձինք:

Գծապատկեր 28-ից ակնհայտ է, որ ծախսերի մեջ քառորդը կազմում է ուսման վարձավճարը, երկրորդ տեղում կացության հետ կապված ծախսերն են, որին հաջորդում են սնունդը և այլ կանոնավոր կենսական ծախսերը: Տրանսպորտի վրա ծախսվող գումարները, ինչպես տեսնում ենք գծապատկերից և աղյուսակից, առաջնային ծախսերի մեջ չեն մտնում Հայաստանում:


Դիտարկենք առաջին երեք հիմնական ծախսերն ըստ ուսանողների ուսման հետ կապված հիմնական բնութագրիների:

### 5.3. Հիմնական ծախսերն ըստ ծնողների հետ չապրող ուսանողների հիմնական բնութագրիների

Գծապատկեր 29-ում ներկայացված են 3 առաջնային միջին ամսական ծախսերն ըստ ուսանողների հիմնական բնութագրիների:<sup>11</sup>

Ներկայացված բոլոր խմբերում (գծապատկեր 29) ուսման վարձի վրա արվող ծախսերը գերակշռում են մյուս տեսակի ծախսերը: Ուսման ծախսերին հաջորդում են կացության, այնուհետև սննդի վրա արվող ծախսերը:

<sup>11</sup>Ներկայացված է բաշխումը յուրաքանչյուր խմբի ներսում. այսինքն, օրինակ բոլոր ծախսերի քանի տոկոսն են հզական սեղի ներկայացուցիչները ծախսում ուսման վարձի վրա:



Գծապատկեր 29: Ծնողների հետ չապրող ուսանողների հիմնական ծախսերն ըստ հիմնական բնութագրիչների(%)

	Բոլոր ուսանո ղները	Իգա կան	Արա կան	Բակա վակիր	Մագիս տրոս	Ցածր ինտենսիվ ություն	Մինչ և 21 տարե կան	30 տարե կան և ավել ի	Մինչև 2 տարվ ա ընթա ցքում	2 տա րի և ավ ելի ուշ
Ուսմա ն վարձ	28777	2989 5	2726 6	28122	38929	21641	30219	22382	27174	243 68
Կացու թյուն	24718	2340 2	2649 5	26911	19093	11888	26124	14031	23320	320 32
Մնացա ծ	12032	1159 4	1262 4	12350	13240	2702	12746	6863	12175	129 97
Հնդամ ենք	126222	1197 20	1350 05	132937	119129	48614	13444 1	75588	126580	143 917

Աղյուսակ 9: Ծնողների հետ չապրող ուսանողների ամսական հիմնական ծախսերն ըստ հիմնական բնութագրիչների (ՀՀ դրամ)


Ինչպես տեսնում ենք գծապատկեր 29-ից, բոլոր խմբերում կայուն է սննդին հատկացվող գումարը, որը կազմում է ընդհանուր ծախսերի միջինում 9-10%-ը:

Իգական սերի ներկայացուցիչները փոքր ինչ ավելի շատ գումար են հատկացնում ուսման վարձերին, քան արական սերի ներկայացուցիչները:

Էական տարբերություն կա մագիստրատուրայում սովորող ուսանողների և բակալավրիատում սովորող ուսանողների միջև: Մագիստրատուրայում սովորողները միջինում ամսական հատկացնում են 38929 ՀՀ դրամ (ընդհանուր ծախսերի 33%), իսկ բակալավրիատում սովորողները՝ 28122 ՀՀ դրամ (ընդհանուր ծախսերի 21%):

#### 5.4. Ուսանողների ֆինանսական իրավիճակի գնահատականն ըստ բնակման ձևի

Ֆինանսական դժվարությունների առկայության հարցին ուսանողների 31%-ը պատասխանել է, որ նման դժվարություններ ունի, և գրեթե նույն չափով՝ 38%-ը պատասխանել է, որ չունի:



Գծապատկեր 30: Ներկայումս ունե՞ք ֆինանսական դժվարություններ ըստ բնակման ձևի

Հետաքրքրական է, որ ծնողների հետ ապրող երիտասարդներն ըստ իրենց գնահատմամբ ավելի շատ ֆինանսական դժվարություններ ունեն (33%-ը նշել է, որ նման դժվարություններ

ունի), քան ծնողների հետ չապրող երիտասարդները, որոնց ընդամենը 22%-ն է նշել, որ ֆինանսական դժվարություններ ունի:

### **5.5. Ծնողների հետ ապրող ուսանողների ֆինանսական իրավիճակի գնահատականը և միջին ամսական եկամուտը**


	Գնահատական (%)	Միջին եկամուտ	Միջին քառակուսային շեղում	Մեջիանային եկամուտ
Ոչ մի դժվարություն	15.7	196885	203800	145000
Քիչ դժվարություններ	18.5	219225	226556	156250
Միջին	32.6	205673	198137	151250
Լուրջ դժվարություններ	15.3	215192	205523	151250
Շատ լուրջ դժվարություններ	18.0	202472	206246	150000

Այլուսակ 10: Ծնողների հետ ապրող ուսանողների ներկայիս ֆինանսական դժվարություններն ըստ միջին եկամուտի (ՀՀ դրամ)

Այլուսակ 21-ից մենք կարող ենք դատել, որ ուսանողների եկամուտի չափը որևէ կերպ չի համադրվում ֆինանսական դժվարությունների հետ կապված իրենց գնահատականների հետ: Նմանատիպ է պատկերը նաև այն ուսանողների դեպքում, որոնք ծնողների հետ չեն ապրում:

### **5.6. Ծնողների հետ չապրող ուսանողների ֆինանսական իրավիճակի գնահատականը և միջին ամսական եկամուտը**

Ինչպես արդեն նշեցինք, ծնողների հետ չապրող ուսանողները ծնողների հետ ապրողների համեմատ ավելի քիչ ֆինանսական դժվարությունների են հանդիպում: Այժմ տեսնենք,թե ինչ տարբերություններ կան գնահատականների մեջ ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների:




**Գծապատկեր 31: Ծնողների հետ չափող ուսանողների ֆինանսական դրույթունն ըստ նրանց հիմնական բնութագրիների**

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 31-ից, իգական սեռի ներկայացուցիչներն ավելի քիչ ֆինանսական դժվարությունների են հանդիպում (18%), քան արական սեռի ներկայացուցիչները (27%):

Բակալավրիատում սովորող ուսանողներն ավելի շատ դժվարություններ ունեն (24%), քան մագիստրատուրայում սովորողները (15%):

## Գլուխ 6: Ուսանողների ֆինանսավորումը և աջակցությունը


### 6.1. Ուսանողի ամսական եկամուտի կառուցվածքն ըստ բնակման (բնակության) ձևի և ուսանողների հիմնական բնութագրիչների



Գծապատկեր 32: Ծնողների հետ ապրող երիտասարդների ամսական եկամուտն ըստ աղբյուրի և հիմնական բնութագրիչների<sup>12</sup>

Ուսանողների ամսական եկամուտի հիմնական աղբյուրը ծնողներից /զուգընկերոց կողմից/ ստացված եկամուտն է (69%): Երկրորդ տեղում սեփական միջոցներն են (8%): Ինչպես տեսնում ենք գծապատկեր 32-ից, բակալավրիատում սովորող ուսանողներն առավել մեծ կախվածության մեջ են ընտանիքից, քան մագիստրատուրայում սովորող ուսանողները: Հստ ծնողների ամենաբարձր կրթամակարդակի՝ բարձրագույն կրթություն ունեցող ծնողներից ուսանողներն առավել մեծ կախվածության մեջ են, քան բարձրագույն կրթություն չունեցող ծնողներից: Վերջինիս դեպքում ուսանողների 40%-ի եկամուտի հիմնական աղբյուրը սեփական միջոցներն են:

<sup>12</sup>Այլ=ինայողություններ+այլ աղբյուրներ




**Գծապատկեր 33:** Ծնողների հետ չապրոդ երիտասարդների ամսական եկամուտն ըստ աղբյուրի և հիմնական բնութագրիների

Հետաքրքրական է, որ ծնողների հետ չապրոդ ուսանողներն առավել մեծ կախվածության մեջ են նրանցից: Այս ուսանողների 80%-ի եկամտի հիմնական աղբյուրն ընտանիքը և զուգընկերներն են: Բակալավրիատում սովորող, ծնողների հետ չապրոդ ուսանողների 85%-ի եկամտի հիմնական աղբյուրը ծնողներն են, իսկ մագիստրատուրայում սովորողների 58%-ի համար են եկամտի աղբյուր հանդիսանում ծնողները:

## 6.2. Ուսանողների եկամուտների բաշխումը և կառուցվածքը

Ուսանողների եկամուտների պատկերն առավել արտահայտիչ է երևում, եթե նրանց բաշխում ենք ըստ 10 եկամտային խմբերի:




**Գծապատկեր 34:** Ծնողների հետ ապրոդ երիտասարդների ամսական ամբողջ եկամուտի բաշխումն ըստ եկամտային դեցիլների (ՀՀ դրամ)

	Եկամտային դեղիլում մաքսիմալ եկամուտը	Թվ. միջինը ըստ եկամտային դեղիների	Ուսանողների թիվն ըստ եկամտային խմբի
1-ին եկամտ. Դեղիլ	50000	27236	153
2-րդ եկամտ. Դեղիլ	118417	59756	154
3-րդ եկամտ. Դեղիլ	105500	78796	153
4-րդ եկամտ. Դեղիլ	133000	96228	155
5-րդ եկամտ. Դեղիլ	168333	125600	154
6-րդ եկամտ. Դեղիլ	210000	160083	154
7-րդ եկամտ. Դեղիլ	269583	208947	153
8-րդ եկամտ. Դեղիլ	342333	258017	154
9-րդ եկամտ. Դեղիլ	516667	347425	152
10-րդ եկամտ. Դեղիլ	3665000	620117	154


**Աղյուսակ 11: Ծնողների հետ ապրող ուսանողների եկամուտների բաշխումն ըստ եկամտային խմբերի**  
 Գծապատկեր 34-ում ներկայացված է առավելագույն եկամուտը յուրաքանչյուր եկամտային խմբի համար: Ծնողների հետ ապրող ուսանողների ամսական եկամուտը գնահատելու համար հաշվարկվել է նաև Զինիի գործակիցը, որն այս դեպքում կազմում է 0.49: Այս ցուցանիշը վկայում է եկամուտների անհամաշափ բաշխվածության մասին:<sup>13</sup>

<sup>13</sup>Զինիի գործակիցն իրենից ներկայացնում է թիվ, որն ընկած է 0-1 միջակայքում, որտեղ 0-ն լիակատար հավասարությունն է (եթե բոլորը ունեն նույն եկամուտը), իսկ 1-ը բացարձակ անհավասարությունն է (եթե մեկի մոտ կենտրոնացված է ամբողջ եկամուտը, իսկ մյուսների մոտ եկամուտը գրոյական է):



Գծապատկեր 35: Ծնողների հետ ապրող ուսանողների ամսական եկամուտների խ(Lorenz Curve)

Ծնողների հետ ապրող ուսանողների 50%-ի ամսական եկամուտը կազմում է մինչև 125000 ՀՀ դրամ, 20%-ինը՝ 125601-208947 ՀՀ դրամ, մյուս 20%-ինը՝ 208948-347425, իսկ 10%-ի եկամուտը կազմում է 347426-620117 ՀՀ դրամ: Փոքր ինչ այլ է պատկերն այն ուսանողների մոտ, որոնք ծնողների հետ չեն ապրում: Եկամտային բոլոր խմբերում այս ուսանողների եկամուտները փոքր ինչ ավելի բարձր են: Ըստ որում, եկամուտի աղբյուրները գրեթե նույնն են, ըստ երևոյթին, առանձին ապրելիս ծախսերն ավելի բարձր են, ինչի շնորհիվ ավելի շատ եկամուտ ունենալու անհրաժեշտություն է առաջանում:




Գծապատկեր 36: Ծնողների հետ չապրող ուսանողների եկամուտների բաշխումը բառ եկամտային խմբերի

	Եկամտային դեղիլում մաքսիմալ եկամուտը	Թվ. միջինը բատ եկամտային դեղիլների	Ուսանողների թիվն բատ եկամտային խմբի
1-ին եկամտ. դեղիլ	63000	45416	31
2-րդ եկամտ. դեղիլ	87083	74833	33
3-րդ եկամտ. դեղիլ	105916	98721	32
4-րդ եկամտ. դեղիլ	144583	124655	32
5-րդ եկամտ. դեղիլ	180000	159320	33
6-րդ եկամտ. դեղիլ	247500	214551	32
7-րդ եկամտ. դեղիլ	331000	288238	32
8-րդ եկամտ. դեղիլ	419333	372986	32
9-րդ եկամտ. դեղիլ	588750	495447	31
10-րդ եկամտ. դեղիլ	588750	495447	31

Աղյուսակ 23: Ծնողների հետ չապրող ուսանողների եկամուտների բաշխումն բատ եկամտային խմբերի

Ինչպես տեսնում ենք աղյուսակ 23-ից, եկամուտները հետևյալ կերպ են բաշխված. ծնողների հետ չապրող երիտասարդների 40%-ն ունի ամսական մինչև 124655 ՀՀ դրամ, 20%-ը՝ 124656-214551 ՀՀ դրամ, մյուս 20%-ը՝ 214552-372986 ՀՀ դրամ, իսկ 10%-ը՝ 372987-495447 ՀՀ դրամ:



Գծապատկեր 37: Ծնողների հետ չափրող ուսանողների ամսական եկամուտների կոնցենտրացիան (Lorenz Curve)


Ինչպես տեսնում ենք գծապատկեր 37-ից, Լորենցի կորն<sup>14</sup> (կարմիր կոր) առավել մոտ է ուղիղ գծին, քան գծապատկեր 35-ում, որտեղ ներկայացված է ծնողների հետ ապրող երիտասարդների եկամտային բաշխումը. սա նշանակում է, որ եկամուտներն ըստ եկամտային խմբերի ծնողների հետ չափրող երիտասարդների մոտ առավել հավասարաշափ են բաշխված:

<sup>14</sup> Որքան Լորենցի կորը մոտ է ուղիղ գծին, այնքան պատկերն ավելի իդեալական է՝ տվյալ դեպքում, այնքան եկամուտներն ուսանողների մոտ առավել հավասարաշափ են բաշխված: Եթե Լորենցի կորը համընկնում է ուղիղ գծին, սա նշանակում է, որ բոլոր ուսանողները հավասարաշափ եկամուտ ունեն:

## Գլուխ 7: Ուսանողների ժամանակային բյուջեն և զրադապությունը

### 7.1. Ուսանողների զրադապությունը երկարաժամկետ կանոնավոր աշխատանքի դեպքում ըստ իրենց հիմնական բնութագրիչների


Հարցված ուսանողների 19%-ը նշել են, որ կիսամյակի ընթացքում շաբաթական 5 և ավել ժամ են աշխատում, 1%-ը նշել է, որ 5-ից պակաս ժամ է աշխատում, մնացած 80%-ը նշել են, որ կայուն վարձատրվող աշխատանք չունեն:



Գծապատկեր 7: Ծնողների հետ ապրող ուսանողների երկարաժամկետ աշխատանքային ակտիվիտյունը (%)


Գծապատկեր 38-ից կարող ենք տեսնել, որ ծնողների հետ ապրող արական սեռի ուսանողների 28%-ը շաբաթական 5 և ավելի ժամ հատկացնում է կայուն վարձատրվող աշխատանքի, իսկ աշխատող աղջկների թիվը երկու անգամ ավելի պակաս է: Նմանատիպ պատկեր ենք տեսնում նաև ըստ որակավորման ուսանողների բաշխման մեջ՝ եթե բակալավրիատում սովորող ուսանողների 18%-ն է աշխատում, ապա մագիստրատուրայում սովորողների 40%-ն է 5 և ավելի է ժամ աշխատում:

Հետաքրքրական է, որ ծնողներից առանձին ապրող երիտասարդներն ավելի քիչ ժամանակ են հատկացնում աշխատանքին, քան ծնողների հետ ապրողները. այսպես՝ ուսանողների ընդամենը 13%-ն է շաբաթական 5 և ավելի ժամ աշխատում:



Գծապատկեր 8: Ծնողների հետ ապրող ուսանողների երկարաժամկետ աշխատանքային ակտիվությունը (%)

## 7.2. Ծնողների հետ ապրող երիտասարդների ժամանակային բյուջեն տիպական ուսումնական շաբաթվա ընթացքում (ժամ/շաբաթ)



Գծապատկեր 40: Ծնողների հետ ապրող ուսանողների ուսումնառության հետ կապված գործունեության ժամանակային բյուջեն

Հարցված ծնողների հետ ապրող ուսանողներն, անկախ բնութագրիչներից, հիմնականում համանման ժամանակ են հատկացնում ուսումնառություն դասընթացներին, ինքնուրույն աշխատանքներին և վճարվող աշխատանքին: Ինչպես տեսնում ենք գծապատկեր 40-ից,


ուսանողները միջինը շաբաթական 29 ժամ հատկացնում են ուսումնառվող դասընթացներին, 27 ժամ ինքնուսուցմանը և ընդամ;2ենը 7 ժամ աշխատանքին: Ընդ որում, տարիքի աճին զուգընթաց աճում է վճարվող աշխատանքին հատկացվող ժամանակը: Հետաքրքրական է, որ եթե հումանիտար ուղղությամբ սովորողները 5 ժամ են հատկացնում աշխատանքին, ապա ճարտարագիտական ուղղությամբ սովորողները 9 ժամ են հատկացնում: Համեմատաբար ավելի շատ ժամանակ են հատկացնում աշխատանքին նրանք, ում մոտ ուսումը շարունակելու ցանկությունը ցածր է. նրանք շաբաթական 15 ժամ հատկացնում են աշխատանքին և ընդամենը 8-ական ժամ ուսումնառությանը և ինքնուսուցմանը:

Համանման է պատկերը նաև այն ուսանողների մոտ, որոնք ծնողների հետ չեն ապրում:

Հարցված բոլոր ուսանողների 20%-ը նշել է, որ կցանկանար ավելի շատ ժամանակ հատկացնել ուսումնառվող դասընթացներին, 33%-ը նշել է, որ ավելի շատ ժամանակ կցանկանար հատկացնել ինքնուսուցմանը, և վճարվող աշխատանք ունեցողների ընդամենը 15%-ն է նշել, որ կցանկանար ավելի շատ ժամանակ հատկացնել աշխատանքին, քան ներկայումս է հատկացնում:

### **7.3. Ժամանակային բյուջեն ըստ մասնագիտական ուղղվածության**

Այժմ տեսնենք, թե ըստ մասնագիտական ուղղությունների բակալավրիատում և մագիստրատուրայում սովորող ուսանողները որքան ժամանակ են հատկացնում ուսումնառվող դասընթացներին, ինքնուսուցմանը և աշխատանքին:



**Գծապատկեր 41:** Բակալավրիատում սովորող ուսանողների ժամանակային բյուջեն տիպական ուսումնական շաբաթվա ընթացքում՝ ըստ մասնագիտական ուղղվածության (Ժամ/շաբաթ)


Ինչպես տեսնում ենք գծապատկեր 41-ից, բակալավրիատում սովորող ուսանողներն անկախ մասնագիտացումից, միջինը համանման ժամանակ են հատկացնում ուսումնառությանը, ինքնուսուցմանը և աշխատանքին: Որոշ չափով միջին ցուցանիշից տարբերվում են գյուղատնտեսական և ծառայությունների (սերվիսի) գծով սովորողները, որոնք փոքր-ինչ ավելի շատ ժամանակ են հատկացնում աշխատանքին, քան ուսմանը:

Փոքր-ինչ այլ է պատկերը մագիստրատուրայում սովորող ուսանողների մոտ, որոնք, անկախ մասնագիտացումից, առավել շատ ժամանակ են հատկացնում աշխատանքին, քան ուսմանը: Այսպես, օրինակ, եթե բակալավրիատում սովորող ճարտարագիտական ուղղությամբ սովորող ուսանողը ուսման վրա ընդհանուր առմամբ ծախսում է շաբաթական 54 ժամ, ապա նույն ուղղությամբ մագիստրատուրայում սովորող ուսանողը 48 ժամ: Ավելի նկատելի է տարբերությունը հումանիտար ուղղությամբ սովորող ուսանողների մոտ՝ բակալավրիատ - 61 ժամ ուսմանը հատկացվող, մագիստրատուրա - 51 ժամ:

## Գլուխ 8: Դասընթացի գնահատում

### 8.1. Դասընթացների հիմնական առանձնահատկությունների գնահատումը


Հարցված ուսանողները հիմնականում լսվատեսորեն են տրամադրված աշխատաշուկայում ներկայիս կրթական ծրագիրն ավարտելուց հետո աշխատանք գտնելու հետ կապված (վերաբերյալ):



Գծապատկեր 42: Ինչպես եք գնահատում Ձեր հնարավորություններն աշխատաշուկայում ներկայիս կրթական ծրագիրն ավարտելուց հետո (%)

Ինչպես տեսնում ենք գծապատկեր 42-ից, ուսանողները համեմատաբար ավելի ցածր են գնահատում արտերկրում աշխատանք գտնելու հնարավորությունը, քան Հայաստանում:

■ Ալույն բավարարված եմ ■ Մտասնի եմ բավարարված ■ Բոլորովին բավարարված չեմ




Գծապատկեր 43: Որքանո՞վ եք բավարարված Ձեր կրթությամբ: (%)

Ուսանողները հիմնականում դրական են գնահատել կրթության հետ կապված տարբեր կետերը: Այնուամենայնիվ, հարցվածների 18%-ը նշել է, որ բավարարված չէ դասավանդման որակից, իսկ 26%-ը նշել է, որ գոհ չէ դասընթացների ցանկից ընտրելու հնարավորությունից (բացակայությունից):


Դասավանդման որակից համեմատաբար ավելի քիչ են բավարարված այն ուսանողները, որոնք ԲՈՒՀ-ում չեն սովորում: Այսպես, ԲՈՒՀ-ում սովորող ուսանողների 11%-ը նշել է, որ բավարարված չէ ուսման որակից, իսկ (ինչպես նաև) ԲՈՒՀ-ում չսովորողների 16%-ն է նշել, որ բավարարված չէ ուսման որակից:

## Գլուխ 9: Միջազգային շարժունություն

Ուսանողների ընդամենը 5%-ն է սովորել արտերկրում որևէ ժամանակավոր կրթական ծրագրով: 41%-ը նշել է, որ չնայած որ արտերկրում չի սովորել, նման ցանկություն չունի, իսկ 54%-ը նշել է, որ չնայած որ չի սովորել, բայց նման ցանկություն ունի:



Գծապատկեր 44: Երբեմն որպես ուսանող սովորե՞լ եք արտերկրում (%)



Գծապատկեր 45: Երբեմն որպես ուսանող սովորե՞լ եք արտերկրում ըստ ուսանողների հիմնական բնութագրիչների(%)


Գծապատկեր 45-ում ակնհայտ է, որ որքան ուսանողների տարիքն ավելի բարձր է, այնքան նրանք ավելի հաճախ են ներգրավվում արտերկրում որևէ կրթական: Մազիստրատուրայում սովորող ուսանողների 9%-ն է սովորել արտերկրում, իսկ բակալավրիատում սովորողների 5%-ը:

Ուսանողներն արտերկրում սովորում էին հետևյալ կրթական ծրագրերով.

	<b>Բոլոր ուսանողները</b>	<b>Մազիստրատուրայում սովորող ուսանողները</b>
Բակալավրիատ	<b>49</b>	31
Մազիստրատուրա	16	<b>34</b>
Ասպիրանտուրա/Դոկտորական ծրագիր	6	6
Կարճաժամկետ պետական ծրագիր	22	22
Երկարաժամկետ պետական ծրագիր	2	0
Այլ հետքուհական ծրագրեր	16	12
Այլ	16	19

Աղյուսակ 24: Ինչ կրթական ծրագրով էիք սովորում, եթե մեկնեցիք արտերկիր (%)

Ինչպես երևում է աղյուսակ 24-ից, արտերկրում եղած ժամանակ ուսանողների կեսը (49%-ը) սովորել է բակալավրի կրթական ծրագրով, 22%-ը կարճաժամկետ պետական ծրագրով: Իսկ ներկայումս մազիստրատուրայում սովորող ուսանողները արտերկրում սովորել են մազիստրոսի կրթական ծրագրով (34%) և բակալավրի ծրագրով (31%):




Գծապատկեր 46: Արտերկրում ստացված կրեդիտները /ԿՓԵՀ, Վկայականներ/ ճանաչվել են Զեր բուհի կողմից (%)

Արտերկրում սովորած ուսանողների միայն 24%-ն է նշել, որ իրենց այնտեղ ստացած կրեդիտները ճանաչվել են Հայաստանում, 10%-ը նշել է, որ մասնակիորեն են ճանաչվել, իսկ 20%-ը նշել է, որ կրեդիտները չեն ճանաչվել:

Արտերկրում ուսանելու ընթացքում ուսանողների համար ֆինանսավորման հիմնական աղբյուր է եղել ծնողների/ընտանիքի/զուգընկերոց օժանդակությունը (61%): Միջինում սովորելու նպատակով ուսանողները 11 ամիս են անցկացրել արտերկրում:

Ուսանողների 27%-ը արտերկրում սովորել են Եվրոպական միության ծրագրի շրջանակներում, 39%-այլ ծրագրի շրջանակներում, իսկ 34%-ը որևէ ծրագրով չի սովորել այնտեղ:




**Գծապատկեր 47: Որքանո՞վ են հետևյալ կետերը խոչընդոտ հանդիսացել(ում) արտերկրում սովորելու համար (մեծ խոչընդոտ) (%)**

Արտերկրում սովորելու ընթացքում հարցվողները հանդիպել են որոշ խոչընդոտների: Առավել մեծ խոչընդոտները նշված են աղյուսակ 47-ում: Ըստ որում՝ որպես ամենամեծ խոչընդոտ, նշվել է հայրենիքում ստացած կրթության ցածր օգտակարությունը:

Ուսանողների որոշ մասը բացի երկարատև կրթական ծրագրերից, ներգրավված են եղել այլ կրթական ծրագրերում: Այսպէս՝ 9%-ը մասնակցել է հետազոտության/հետազոտական պրակտիկայում, 9%-ը ունեցել է մասնագիտական/արտադրական պրակտիկա, 11%-ն ամառային/ձմեռային դպրոցի են մասնակցել, իսկ 11%-ը մասնակցել են լեզվի դասընթացների: Այն ուսանողները, որոնք դեռևս արտերկրում չեն եղել և պլանավորում են մեկնել ուսումը շարունակելու, նախընտրել են հետևյալ երկրները (երկրների միությունը)<sup>15</sup>.

<sup>15</sup>Եվրոպական Միության երկրներ, ԵԲԿՏ-Եվրոպական Բարձրագույն Կրթական Տարածք, Ոչ ԵԲԿՏ երկրներ-մնացած երկրները



**Գծապատկեր 48:** Որտեղ եք պատրաստվում ստանալ ժամանակավոր կրթություն արտերկրում (%)

Ինչպես պարզ է դառնում այս գլխում իրականացրած վերլուծությունից, ՀՀ ուսանողների հետաքրքրությունը դեպի միջազգային շարժունությունը և միջազգայնացումը մեծ է, և նրանք ցանկություն ունեն ավելի ակտիվորեն մասնակցել արտերկրի կրթական ծրագրերին:

## Ամփոփում

Այսպիսով, սույն վերլուծության մեջ անդրադարձանք ՀՀ ուսանողների սոցիալ-տնտեսական բնութագրիչներին, ինչպես նաև շարժունությանը, կրթության որակի նկատմամբ նրանց գնահատականներին:

Ամփոփելով հետազոտության հիմնական արդյունքները, նշենք, որ պարզ դարձավ՝

- Ինչպես և արդեն նշվել է, հարցված ուսանողների մեծ մասը բաժին է ընկնում հումանիտար գիտությունների և արվեստի ուղղությամբ սովորող ուսանողներին (28%) և սոցիալական, բիզնեսի և իրավագիտությամբ սովորող ուսանողներին (26%), նրանց հաջորդում են ճարտարագիտական ուղղությունը (17%) և մյուս ճյուղերը:
- Հարցման մասնակիցների 10 % ունի հասուր կարիք:
- Հարցման մասնակիցների գերակշիռ մեծամասնությունը՝ 92 % մինչ բուհ ընդունվելը չի աշխատել որևէ տեղ: Սա պայմանավորված նաև այն հանգամանքով, որ ուսանողների մեծ մասը (82 %), դպրոցն ավարտելուց անմիջապես հետո է ընդունվել բուհ:
- Ուսանողների մեծ մասը (63 %) պլանավորում է շարունակել կրթությունը:
- Ուսանողների մեծ մասը (62 %) բարձր է գնահատում Հայաստանում աշխատանք գտնելու հնարավորությունը:
- Հարցվածների 89.5%-ը շաբաթվա ընթացքում միջինում 30 ժամից ավելի են ծախսում ուսումնառվող դասընթացների և ինքնուրույն պարապմունքների վրա, 7.6%-ը՝ 21-30 ժամ են ծախսում, 2.8%-ը՝ 11-20 ժամ:
- Ծնողների կրթությունը եական նշանակություն է ունեցել իրենց երեխաների՝ բարձրագույն կրթություն ստանալու հարցում:
- Հարցված ուսանողների կեսից ավելին իրենց ծնողների սոցիալական դիրքը գնահատում են ցածր, 35%-ը միշտն և միայն 11%-ն է բարձր գնահատում ծնողների սոցիալական դիրքը:
- Հարցված ուսանողների 82.2%-ը ներկայումս ապրում է ծնողների հետ: Ըստ որում առանձին ապրող ուսանողների 5%-ը ապրում է ուսանողական հանրակացարանում:

- Ծնողներից առանձին ապրող ուսանողների 3%-ն ապրում է զուգընկերոց և երեխաների հետ, 9%-ն այլ անձանց հետ, իսկ 6%-ն ապրում է միայնակ: Բակալավրիատում սովորող ուսանողների 84% է ապրում ծնողների հետ, իսկ մագիստրատուրայում սովորողների դեպքում՝ 76%-ը: Այս ցուցանիշը սերտորեն փոխկապված է տարիքային գործոնի հետ:
- Հարցված ուսանողների կեսից ավելին (56%) շատ զրի է իր կացարանային պայմաններից, ընդ որում ընդհանուր առմամբ ուսանողների 75%-ը բավարարված է իր կացարանով:
- Ուսանողները ֆինանսական կախվածության մեջ են գտնվում ծնողներից և կացության ծախսերի մեծ մասը հոգում են ծնողներից ստացված գումարով՝ միջինում ամսական վճարելով 106000 ՀՀ դրամ ծնողների տրամադրած գումարներից և հինգ անգամ ավելի քիչ՝ 20000 ՀՀ դրամ դրամ սեփական գրպանից:
- Միջին ամսական ամենամեծ ծախսը բաժին է ընկնում այլ անձանց հետ ապրող ուսանողներին. 121000 ՀՀ դրամ ծնողներից և 18000 սեփական գրպանից: Միջին ամսական կենցաղային ծախսերը ծնողների հետ չապրող ուսանողի համար կազմում են 126221 ՀՀ դրամ, հանրակացարանում ապրողների համար կազմում են 96673 ՀՀ դրամ:
- Հետազոտության արդյունքները և ընդհանուր տրամաբանությունը վկայում են այն մասին, որ անկախ նրանից, թե ուսանողներն ապրում են ծնողների հետ, թե առանձին, ծնողներն այս կամ այն կերպ բավական մեծ ազդեցություն ունեն նրանց ամենօրյա կյանքում, ընդ որում խոսքը գնում է նախ և առաջ նյութական ապահովության և կացության ծախսերը հոգալու մասին:
- Ֆինանսական դժվարությունների առկայության հարցին ուսանողների 31%-ը պատասխանել է, որ նման դժվարություններ ունի և գրեթե նույն չափով 38%-ը պատասխանել է, որ չունի: Իզական սեռի ներկայացուցիչներն ավելի քիչ ֆինանսական դժվարությունների են հանդիպում (18%), քան արական սեռի ներկայացուցիչները (27%):

- Բակալավրիատում սովորող ուսանողներն ավելի շատ դժվարություններ ունեն (24%), քան մագիստրատուրայում սովորողները (15%):
- Ուսանողների ամսական եկամուտի հիմնական աղբյուրը ծնողներից/ զուգընկերոց կողմից ստացված եկամուտն է (69%): Ծնողների հետ ապրող ուսանողների 50%-ի ամսական եկամուտը կազմում է մինչև 125000 ՀՀ դրամ, 20%-ինը՝ 125601-208947 ՀՀ դրամ, մյուս 20%-ինը՝ 208948-347425, իսկ 10%-ի եկամուտը կազմում է 347426-620117 ՀՀ դրամ: Ծնողների հետ չապրող երիտասարդների 40%-ն ունի ամսական մինչև 124655 ՀՀ դրամ, 20%-ը՝ 124656-214551 ՀՀ դրամ, մյուս 20%-ը՝ 214552-372986 ՀՀ դրամ, իսկ 10%-ը՝ 372987-495447 ՀՀ դրամ:
- Ուսանողները հիմնականում դրական են գնահատել կրթության հետ կապված տարրեր կետերը: Այնուամենայնիվ հարցվածների 18%-ը նշել է, որ բավարարված չէ դասավանդման որակից, իսկ 26%-ը նշել է, որ զոհ չէ դասընթացների ցանկից ընտրելու հնարավորությունից (բացակայությունից):
- Ուսանողների ընդամենը 5%-ն է սովորել արտերկրում որևէ ժամանակավոր կրթական ծրագրով: 41%-ը նշել է, որ չնայած որ արտերկրում չի սովորել և նման ցանկություն չունի, 54%-ը նշել, որ չնայած որ չի սովորել, բայց նման ցանկություն ունի:

Այսպիսով, փորձենք պատրաստել հայ ուսանողի սոցիալական դիմանկարը.

- ✓ Ուսման ընթացքում նա աշխատում է, որպեսզի վճարի ուսման վարձը:
- ✓ Ֆինանսական խնդիրների պատճառով նա չի ցանկանում ընդհատել կրթությունը բարձրագույն կրթության տարրեր աստիճանների միջև:
- ✓ Նա չի ուզում սովորել ծնողների ֆինանսական աջակցության հաշվին:
- ✓ Նա ուզում է ավելի ընդգրկված լինի միջազգային շարժունության ծրագրերում:
- ✓ Նա ուզում է երեխա ունենալ և ստանալ բարձրագույն կրթություն միաժամանակ:
- ✓ Նա ուզում է սովորել Եվրոպայում:
- ✓ Նա ուզում է շարունակել իր կրթությունը:
- ✓ Նա ցանկանում է, որպեսզի ընդլայնվեն ԲՈՒՀ ընդունվելու հնարավորությունները:
- ✓ Նա ուզում է ունենալ ավելի լավ ուսանողական կացարանային պայմաններ:

- ✓ Հասուն կարիքների պատճառով նա չի ուզում ունենալ սահմանափակ կրթության հնարավորություններ:

## Առաջարկություններ

<<Ելքոստուդենտ V>> հարցմանը մասնակցած ուսանողները բարձրագույն կրթություն են ստանում նոր քաղաքական, հասարակական և տնտեսական պայմաններում, իսկ ուսանողների ծնողները՝ Խորհրդային Միության տարիների ընթացքում: Ազգային բարձրագույն կրթության համատեքստում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնց արդյունքում հստակ է դարձել, որ պետությունը մեծ ուշադրություն է դարձնում ուսանողների սոցիալական հարցերին, փորձելով բարելավել նրանց սոցիալ-տնտեսական պայմանները:

Երկու տասնայակից ավել տարիների ընթացքում իրականացվել են բազմաթիվ փոփոխություններ, որոնց նպատակն է եղել ավելի հասանելի դարձնել բարձրագույն կրթությունը հասարակության տարբեր խավերի ներկայացուցիների համար, բարելավել կրթական ծրագրերի բովանդակությունը, ստեղծել արդի մասնագիտություններ, որոնք հնարավորություն կընձեռն ուսանողներին իրնեց տեղը գտնել տեղական և միջազգային աշխատաշուկաներում:

Սույն հետազոտությունը լավագույն շարժառիթ է հանդիսանում ՀՀ բարձրագույն կրթության պատասխանատուներին և քաղաքականություն մշակողների համար, քանի ստացված թվային արդյունքները կիրանեն նոր բարեփոխումների շրջափուլ՝ հիմնված ստացված թվային տվյալների վրա և նպատակ ունենալով բարելավել մեր ազգային ցուցանիշները մնտակա տարիների ընթացքում:

Ուսանողների ստացված պատասխանները հնարավություն են ընձեռում մեզ ներկայացնել մի շարք կարևոր առաջարկություններ, որոնցից հիմնականները ներկայացնում ենք ստորև:  
Ինստիտուցիոնալ մակարդակի վրա առաջարկում ենք.

1. բարելավել բուհերի կրթական ծրագրերի որակը՝ ավելի շատ ուսանողներ ընդգրկելու նպատակով;

2. ստեղծել և խթանել ուսանողական լրացուցիչ ծառայությունների զարգացումը, որոնք ավելի արդյունավետ ձևով կհամագործակցեն ուսանողների հետ և կնվազեցնեն նրանց ուսուցման հետ կապված բովանդակային և կազմակերպչական խնդիրները;
3. բարելավել ուսանողների կացարանային պայմանները:
- Ազգային մակարդակի վրա առաջարկում ենք.
1. տարբերակել և ընդլայնել ֆինանսական աջակցության աղբյուրները, քանի որ ֆինանսական դժվարությունները լուրծ խոչընդոտներ են ՀՀ ուսանողների համար բարձրագույն կրթություն ստանալու հարցում;
  2. մշակել նոր հայեցակարգ՝ միտում ունենալով բարելավել հատուկ կարիքներ ունեցող ուսանողների պայմանները, մշակել չափանիշներ, որոնք պարտադիր պետք է հանդիսանան ըստ լիցենզիայի Հայաստանի Հանրապետությունում բարձրագույն կրթություն իրականացնելու համար;
  3. պարբերաբար խթանել տարաբնույթ հետազոտություններ՝ ուղղված ուսանողների սոցիալական չափումներին և միտում ունենալով հետզետե բարելավել նրանց սոցիալ-տնտեսական պայմանները;
  4. ՀՀ մարզերի բարձրագույն ուսումնական հաստատություններում ներդնել այն ծրագրերը, որոնք առաջմ առկա են միայն մայրաքաղաքի կրթական հաստատություններում՝ միտում ունենալով խթանել մարզերի ուսանողների համար հավասար կրթական պայմանների ապահովումը և նվազեցնելով կենտրոնացման միտումները;
  5. Խթանել բարձրագույն կրթություն չունեցող ծնողների երեխաների մուտքը դեպի բարձրագույն կրթություն:

Միջազգային մակարդակի վրա՝

1. Հայաստանի Հանրապետության ուսանողներին մասնակցության ավելի շատ քվուտաներ տրամադրեն միջազգային փոխանակման ծրագրերում;
2. Ընդլայնել համագործակցությունը Բոլոնիայի անդամ պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև՝ կոնսորցիոնների ստեղծման և արդյունավետ գործունեության համար:

Սույն հետազոտական ծրագրի շրջանակներում կատարված վերլուծությունը և դրա արդյուքները չափազանց կարևոր նշանակություն կունենան ՀՀ բուհական համակարգի համար՝ խթանելու բարձրագույն կրթություն իրականացնող հաստատությունների կարողությունների զարգացումը և կառուցելու արդյունավետ քաղաքականություն՝ ժամանակակից աշխարհի մարտահրավերներին համընթաց:

Տպագրվել է «Հայկարի» ՍՊԸ տպարանում  
Չափսը՝ 70 x 100/16, ծավալը՝ 5.25 մամուլ  
Տպագրությունը՝ օֆսեթ, թուղթը՝ կավճապատ  
Տպաքանակը՝ 100 օրինակ

---

Հասցե՝ Կիւյան 18/6, հեռ.. 043-10-70-90